№ 255 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 17 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 17 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 255

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և
7 ամսվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 6.

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE VENISE S. LAZARE

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղի (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Ընդ հովանեաւ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ամենայն Հայոց

ՎԱՂՎԱՆԻՑ (նոյեմբերի 18-ից) յատկապէս հայ փախստական հոգևորականների, արուեստագէտների, գրականագէտների, ուսուցիչների, վարժուհիների եւ նրանց ընտանիքների համար ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔԸ իր ձրի ճաշարան-թէյարանի ճիւղը ԲԱՑՈՒՄ է Գրական-Գեղագիտական Սալոնի սեղանատանը (Գոլովինսկի պր. տ. № 41), ուր յարգանօք հրաւիրվում են վերոյիշեալները այսուհետև ամեն օր շնորհ բերել առաւօտ. ժամը 11—12½ նախաճաշի (թէյ՝ հացով), ցեր. ժամը 4-ին ճաշի, երեկ. 6—7 ժ. թէյի։ ՍԱԼՈՆԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ բաց է առ. 10½ ժ. մինչև 10 ժ. երեկ.։ ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔԻ ձմեռային ապաստարանում (Ակվարիումի այգում) շարունակվում է բոլոր փախստականների անվճար մատակարարումը՝ առ. նախաճաշ 9—11 ժ., ճաշ՝ 2½—3½ ժ., երեկ. թէյ՝ հացով—7—8 ժ.։ ՁՄԵՌԱՅԻՆ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ գիշերօթիկներին տրվում են անկողին և սապոն թէ լուացվելու և թէ ճերմակեղէնները լուանալու համար։ ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔԻ Տեղեկատու Բիւրօն եւ Գրասենեակը տեղափոխված են ամառային ապաստարանից «ԱՂԲԻՒՐ»-«ՏԱՐԱՁԻՆ» կից ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՕՆ (Головинскій пр. № 41), որտեղից և պէտք է վաղօրօք ստանալ մուտքի տոմս։

ան. 13. 2—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՈՏՈՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7-29.

ան. (ա. օ.) 504. 100—90

Կարսի շրջանի համար հարկաւոր են
6 ԲԺԻՇԿ ու 6 ՖԵԼԴՇԵՐ

համաճարակի դէմ կռւելու համար։ Բժիշկներին ամսական 450 ռ. ռոճիկ և ճանապարհածախս 450 ռ., ֆէլդշէրներին ամսական 120 ռ. և ճանապարհածախս 120 ռ., 6 ամիս ծառայելու պայմանով։ Շրջագայելու դէպքում ճանապարհածախս տրվում է ըստ սահմանված սովորութեան։ Շրջագայութիւնը մեծ մասամբ կը կատարվի հեծեալ կերպով։ Մանրամասնութիւնների համար դիմել շրջանային բժշկին՝ № 3540։

Ուչ-շրջանային բժիշկ՝
Դ-ր Տէր-Գրիգորեանց

ան. 834. 1—1

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՋԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։ Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։

(ա. օ.) ան. 515. 100—73

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐՁՈՅԵԱՆ

ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիեվսկայա փող. № 1. Տէլէֆոն № 16—67։

ան. 753. 50—24

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։
Бебутовская ул. № 26. 3-րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։

ան. 779. 50—18

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքաշեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2.
(եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Բոլշևսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.

(և.հ.կ.) ան. 634. 100—28

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԱԿՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 նոյեմբերի

ԳԼԽԱՒՈՐ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԿԱՅԱՆ.

— Նոյեմբերի 5-ից մինչև 12-ը Թագաւոր Կայսրը Գահաժառանգ-Արքայազնի հետ միասին այցելեց հարաւային զօրաճակատը, ուր զանազան քաղաքներում և աւաններում մինչև սահմանը դիտեց կայաններում եղած զօրքերին.

Ամեն մի զօրադիտումի ժամանակ Թագաւոր Կայսրը սովորականի նման անցնում էր Գահաժառանգի հետ զօրքերի շարքերով. Զօրապետները և օֆիցէրները կանչվում էին Թագաւոր Կայսրի մօտ, որ դիմում էր նրանց զանազան հարցերով.

Ամենուրեք զօրքերի տրամադրութիւնը ոգևորված էր Վեհափառ Պետի և Գահաժառանգի ներկայութիւնից։ Զօրքերի տեսքը շատ առոյգ էր։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
14—15 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Սև-ծովի ափային շրջանում, Խոփից դէպի հարաւ-արևմուտք մեր հետախոյզները գործում են աջողութեամբ.

Թորթում լճից դէպի հիւսիս Թէվ գիւղի մօտ հետախոյզները, իջնելով ձորը թոկերի օգնութեամբ, անսպասելի յարձակումով ցիրուցան արին թիւրքերի մի խմբի, ձեռք ձգելով նրանց զէնքը։

Դուտախի շրջանում, Եփրատ գետի մօտ և Մանազկերտից դէպի արևելք դրութիւնն անփոփոխ է։

Արճէշի շրջանում, Վանի լճի հիւսիսային ափում, Խոփ-Քեօփրի գիւղի մօտ ընդհարումներ եղան քրդական հրոսակախմբերի հետ. վերջինները, կրելով լուրջ կորուստներ, բարձրացան լեռները։

Պարսկաստանում, Ուրմիայի լճից դէպի հարաւ, Կալարասխ գիւղի մօտ մեր զօրքերն ընդհարում ունեցան թիւրքական և քրդական հրոսակախմբերի հետ, որոնք չը դիմանալով մեր գրոհին փախան Թիւրքիա։

Թէհրանի ուղղութեամբ մեր զօրքերի գալուստից յետոյ Էնզէլիում և Կերէջ քաղաքներում ոչինչ արձանագրելի տեղի չունեցաւ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Սև ծովի վրա այս օրերս թշնամու սուզանաւերից մինը, գտնվելով ոչ հեռու կովկասեան ծովափից, հանդիպեց մեր մի փոքր անզէն շոգենաւի և առաջարկեց նրան անձնատուր լինել։ Ստանալով մերժում, սուզանաւը կրակ բացեց շոգենաւի վրա։ Ռմբակոծութիւնը, բարեբաղդաբար, անհետևանք եղաւ։ Շոգենաւին աջողվեց ճողոպրել անվնաս թշնամու հետապնդումից։

Միևնոյն սուզանաւը յետոյ փորձեց մօտենալ մի այլ շոգենաւի, որ կանգնած էր խարիսխ ձգած՝ ափի մօտ, սակայն շոգենաւին մօտենալիս սուզանաւի դէմ սկսվեց ուժեղ հրացանաձգութիւն ափից, որի պատճառով նա ետ դառաւ, ոչ մի վնաս չը պատճառելով շոգենաւին։

ՓԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն Դարդանէլում կատարվող գործողութիւնների մասին։

Նոյեմբերի 11 ին և 12-ին գործեց մեր արտիլերիան, որին աջողվեց ռմբակոծել թիւրքական խոշոր թնդանօթներից մի քանիսը, որից յետոյ թշնամու կրակի ույժը թուլացաւ բաւականին։

Լուրերի համաձայն, Կ. Պոլիս են տարված մեծ թւով վիրաւորներ։

Նոյեմբերի 11 ին տեղի ունեցան մի քանի կռիւներ ռումբերով։

Նոյեմբ. 12-ին մենք ականով պայթեցրինք թշնամու խրամատներից մինը մեր զօրաճակատի կենտրոնական մասում։

ԼՈՆԴՈՆ. — Պաշտօնական։ Միջագետքում, Կտեզիֆոնում տեղի ունեցած ճակատամարտի մասին հրատարակված հաղորդագրութեան մէջ ասված է, որ անգլիական զօրքերը ձեռք ձգեցին կռւի դաշտն այն ժամանակ, երբ թիւրքերը, եղած տեղեկութիւնների համաձայն, նահանջում էին դէպի Դիալայա, որ գտնվում է Բաղդադից ոչ հեռու։

Պարզվեց, որ գերիների թիւը, որ սկզբում կարծվում էր 800, իսկապէս 1300 է, որոնք և ուղարկվել են Կուտ։ Մեր վիրաւորների թիւը հասնում է 1800-ի, իսկ սպանվածների քանակի մասին դեռ տեղեկութիւններ չը կան։

Զօրաբանակի հրամանատար գեներալը մեծ ոգևորութեամբ է խօսում զօրքերի առոյգ տրամադրութեան մասին. չը նայած նրանց ունեցած լուրջ կորուստներին և կրած փորձութիւններին՝ կերակրի ու ջրի պակասութեան պատճառով։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
14—15 նոյեմբերի

ՍՈԼՈՒՆ.—Ֆրանսիացիք նոյեմ. 12-ին առաջացան և հակայարձակումով ետ մղեցին բուլղարներին Կրիվոլակ-Ցրնա-Բողլէկ գծի վրա։ Բուլղարներն անկարգ նահանջեցին թողնելով բազմաթիւ սպանվածներ և վիրաւորներ։

Վալանդովօ շրջանում բուլղարները յարձակվեցին անգլիական զօրքերի վրա, բայց անգլիական ուժեղ կրակը կանգնեցրեց նրանց։

Սերբերը շարունակում են յարձակումներ գործել բուլղարների վրա, որոնք փակել են դէպի Պրիլէպ տանող ճանապարհը։ Կռիւը շարունակվում է մեծ կատաղութեամբ։

Աւստրօ-գերմանական զօրքերը դիմում են դէպի Ուսկիւբ։

Ամեն օր անգլիական զօրքերը ստանում են օգնութիւն, որը ուժեղ արտիլերիայով դիմում է դէպի Սերբիա։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Բուլղարիայից տեղեկացնում են, որ աւստրօ-գերմանական երեք գունդ ուղարկվել են Ռուշչուկ։ Դանուբի վրա, բուլղարական ափի երկարութեամբ, մանաւանդ Ռախովի մօտ փորվում են խրամատներ։ Աշխատանքներին մասնակցում են մեծ թւով կին և տղամարդ։

ՍՈԼՈՒՆ.—Բուլղարական մամուլը պնդում է, որ Սերբիական Մակեդոնիան գրաւելուց յետոյ Բուլղարիան կը դադարեցնէ պատերազմական գործողութիւնները։

Սոֆիայից հաղորդում են, որ թիւրքական 3 դիվիզիաների ներկայութիւնը Սոֆիայում, Մուստաֆա-փաշայում, Վառնայում և Բուրգասում անհանգստութիւն է պատճառում բուլղարական հասարակական կարծիքին։

Կ. Պոլսից հեռագրում են, որ թիւրքական մամուլը պնդում է, թէ հակառակ Րադոսլավովի յայտարարութիւններին՝ Թրակիան պէտք է պատկանի Թիւրքիային։

ԱԹԷՆՔ.—Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ սերբերը յամառ կռիւ են վարում Կաչանիկի շրջանում դէպի Միտրովիցա նահանջի ճանապարհն ապահովելու համար, որտեղից բուլղարները սպառնում են նրանց շրջապատել։

ՓԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն։

Նոյեմբերի 12 ին մեր աէրոպլանները նետեցին 50 ռումբ բուլղարների վրա Ստրումիցա գիւղի մօտ և ռմբակոծեցին Իշտիբը։ Ի նկատի առնելով սերբ զօրքի ներկայ րոպէի գրաւած դիրքերը, Ցրնայի ձախ ափում գտնվող մեր զօրքերը ետ քաշվեցին նորից այդ գետի աջ ափը՝ առանց որևէ դժուարութեան հանդիպելու։

ՑԵՏԻՆԻԷ.—«Պրէսս-Բիւրօն» յայտնում է նոյեմ. 13-ից, որ բոլոր զօրաճակատների վրա տեղի են ունենում թնդանօթային կռիւներ և հետախուզումներ. մենք վանեցինք Ֆոչէի կողմից ձեռնարկված ուժեղ յարձակումը։

ՍՈԼՈՒՆ.—Տեղի են ունենում լուրջ կռիւներ սերբերի և բուլղարների միջև Պրիլէպի ուղղութեամբ, որոնք սակայն չեն փոխում զգալի կերպով՝ տիրող ընդհանուր դրութիւնը։

Պրիզրէնից հաղորդում են, որ սերբերը նահանջում են լիակատար կարգով, համաձայն վաղօրօք մշակված ծրագրի, աջողութեամբ գործելով ընդ սմին խիզախ հակայարձակումներ։

ԱԹԷՆՔ.— Տեղումս ստացված տեղեկութիւնների համաձայն, սերբ զօրքերը Նովօ-Բազարի և Միտրովիցայի կողմից եկած աւստրօ-գերմանական զօրքերի ճնշման տակ շարունակում են նահանջել լիակատար կարգով Մոնաստիրի ուղղութեամբ, անցնելով Գոստիվար-Կրիչովօ և Պրիզրէն-Դիբրա-Օխրիդա ճանապարհներով։ Սերբ զօրքերի գլխաւոր ույժերը կենտրոնացած են Մոնաստիրի շրջանում և Կոսովոյի մօտ, ուր տեղի է ունենալու վճռական ճակատամարտ։ Պրիլէպի շրջանում գտնվող սերբ զօրքերը, ստանալով օգնութիւն Կաչանիկից, առաջխաղացման են ձեռնարկել բուլղարների դէմ։ Կռիւը շարունակվում է։ Կոսովոյի շրջանում բուլղարները փորձեցին կտրել Կաչանիկի կողմից նահանջող սերբ զօրքերի ճանապարհը։

«Էստիա» լրագիրը յայտնում է, որ նա լիազօրված է պաշտօնապէս հերքել այն ամեն լուրերը, թէ Սերբիան մտադիր է անջատ հաշտութիւն կնքել Գերմանիայի հետ։

Դոյրան-Կաւչօրինօ զօրագծի վրա անգլիական զօրքերին փոխարինել են ֆրանսիացիք։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Բուլղարիայից ռումինական լրագիրներին հաղորդում են, որ վերջին օրերը Ռուշչուկում նկատվում է զինւորական իշխանութիւնների տենդային գործունէութիւն, որոնք ընդարձակ միջոցներ են ձեռք առնում յարմարեցնելու մասնաւոր հասարակական շէնքերը այն աւստրօ-գերմանական զօրքերի համար, որոնք սպասվում են այստեղ, ինչպէս հաւատացնում են, թւով 50,000 զինւոր։ Միևնոյն ժամանակ զէնքի և ռազմամթերքի մեծ քանակութիւն շարունակ բերվում է Դանուբի վրայով։ Ռուշչուկում բեռնել են 6 շոգենաւ և 4 բեռնատար աւտոմօբիլ Թիւրքիայի համար։ Հաւատացնում են, որ Ռուշչուկի շրջակայքում՝ Շումլայից մինչև Վառնա բուլղար զօրքերին փոխարինել են թիւրքերը այն երկիւղից, թէ ռուս զօրքերի երևալու դէպքում բուլղար զօրքերը դասալիք կը լինեն խումբ-խումբ։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
14—15 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Գերմանացիք անյաջող փորձ արին ետ խլել Սվինտեն լճի շրջանում կորցրած խրամատները։ Բացի այդ գործողութիւնից երէկ ամբողջ զօրաճակատի վրա խոշոր կռիւներ չեղան։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Գերմանացիք թոյլ փորձ արին յարձակում գործել Աա գետի շրջանում, Բաբիտ լճից դէպի արևմուտք, բայց անաջող։

Մնացած ամբողջ զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ԼՈՆԴՈՆ.—Ֆէլդմարշալ Ֆրենչը տեղեկացնում է.

Մեր արտիլերիան աջողութեամբ 4 օր շարունակ ռմբակոծում էր թշնամու խրամատները, ոչնչացնելով խուցերը։ Թշնամին պատասխանում էր թոյլ։ Վերջին օրերը երկու կողմն էլ անընդհատ շարունակում են ականային կռիւ։

ՓԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

Երէկ ցերեկով Մաասից դէպի արևմուտք թշնամին ապարդիւն տեղը գործ դրեց խեղդող գազեր, բայց յարձակումներ չը գործեց։ Միևնոյն օրը թշնամու մի աէրօպլան ընկաւ Էն գետը. օդաչուներին աջողվեց լողալով ազատվել։

ՓԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտուայում Ժիվանշի դաշտային ամրութեան շուրջ և Բոկլենկուրի ու Շոնիկլէրի միջև ամբողջ գիշերը կռիւներ էին ձեռքի ռումբերի օգնութեամբ։ Լաբիրինտից դէպի հիւսիս թշնամին յարձակման դիմեց. սկսվեց կատաղի կռիւ, որ վերջացաւ մեզ համար աջող։ Թշնամին անկարող եղաւ մօտենալ մեր խրամատներին և միայն վերցրեց իր նետած ականից առաջացած փոսը։

Երէկ մեր օդաչուները 990 միլլիմետրանոց ռումբեր նետեցին Նօյօն կայարանի վրա և ստիպեցին երկու օդապարիկ իջնել։ Թշնամու մի օդաչու ևս իջաւ Պօնտա-Մուսսօն շրջանում։

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Տիրօլ-Տրենտինօ սահմանի երկարութեամբ և Կարնիայում գործում էին մանր զօրամասեր և տեղի էր ունենում ուժեղ թնդանօթային կռիւ։ Մրզլի մօտ յարձակման ժամանակ մեր զօրքերը գերեցին 120 մարդ, որոնց թւում 5 օֆիցէր։ Գորիցայի գագաթի վրա կռիւները չեն դադարում։

Կարսոյում տեղի է ունենում թնդանօթաձգութիւն. մեր հետևակ զօրամասերն ամրացան իրանց գրաւած դիրքերում և գերեցին 89 մարդ։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
14 նոյեմբերի

ԹԵՀՐԱՆ.—Շահը մեկնեց երէկ քաղաքամերձ պալատը, ուր այսօր հրաւիրել է ռուսաց դեսպանին։

Պարսից կառավարութիւնը Համադանի ժանդարմներին յայտարարեց ապստամբված։ Վերջիններին միացել են մօտ 6000 մուջահիդներ։ Ժանդարմների գլուխ կանգնած են 5 շվէդ և 8 գերմանացի օֆիցէր։

Շվէդ օֆիցէրների մէջ տիրում է պառակտում։ Նրանցից մի քանիսը, օգտվելով այն բանից՝ որ նրանք չեն գտնվում շվէդ կառավարութեան ծառայութեան մէջ, անցել են թշնամի բանակը. ոմանք պարսաւանք են յայտնում ընկերներին, գտնելով նրանց անհնազանդութիւնը շահին և ապստամբութեանը մասնակցելը ոչ-լօյալ։

Ապստամբ ժանդարմները թշնամի վարձկանների հետ ձեռք են ձգել Համադանի ճանապարհը և գերմանական օֆիցէրների ղեկավարութեամբ ամրացնում են լեռնանցքները՝ թիւրքաց սահմանին մօտ գտնվող շրջանն ապահովելու համար։ Պրինց Րէյսը ղեկավարում է Կումի կոմիտէտին, որ եռանդուն յարաբերութիւններ է պահպանում Թեհրանի հետ, որպէսզի իր ազդեցութեանը ենթարկէ շահին և կառավարութեանը։ Այդ նպատակով Թեհրանում սպասվում են թիւրքաց և աւստրիական դեսպանները։

ԹԵՀՐԱՆ.—Ունկնդրութեան ժամանակ շահը խնդրեց ռուսաց դեսպանին նշանակութիւն չը տալ այն լուրերին, թէ ինքը մտադիր է հեռանալ մայրաքաղաքից, ի նկատի ունենալով այն որ նորին մեծութիւնը գտնվում է քաղաքամերձ ռեզիդենցիայում։ Շահը բնաւ չէ նսեմացնում Պարսկաստանի ներքին դրութեան լրջութիւնը, նկատի առնելով մեր թշնամիների պրովոկացիաները, բայց նա յոյս է դնում ժանդարմների խելացիութեանը և սպասում է, որ Թագաւոր Կայսրը, ինչպէս և Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը և Ռուսաստանի կառավարութեան՝ դէպի նրա պատանի ոյժերը տուած բարեացակամ վերաբերմունքը կօգնէ նրան կատարելու իր պարտականութիւնը հանդէպ երկրի։

Ռուսական հիւպատոսական ներկայացուցիչները հաղորդում են, որ գաւառներում ստացվել է պարսից կառավարութեան հետևեալ հրահանգ-ազդը. «Յայտարարվում է առ ի հանգստութիւն բոլորի, որ Պարսկաստանի բարեկամական յարաբերութիւնները Ռուսաստանի և Անգլիայի հետ միանգամայն վերականգնված են»։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

15 նոյեմբերի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Թագաւորի, գահաժառանգի և մինիստրների ներկայութեամբ բացվեց պառլամենտի հերթական նստաշրջանը։

Թագաւորը կարդաց հետևեալ գահական ճառը.

«Ներկայ պառլամենտական նստաշրջանը բացվում է միևնոյն հոգսերի մէջ, ինչպէս և անցեալ տարի։ Պատերազմը, որ մեր շուրջ աշխարհը արիւնով է պատել, շարունակվում է աւելի կատաղութեամբ։ Նոր պետութիւններ մասնակցեցին պատերազմին, աւելացնելով այդպիսով եւրոպական հրդեհի ծաւալը։ Այդ դրութիւնը մեզ վրա կրկնակի պարտականութիւն է դնում միացնելու մեր բոլոր ջանքերը ռումինական կարևոր շահերի պաշտպանութեան համար և հեռացնելու մեր սրտերն ու մտքերը ուրիշ հոգսերից։

«Այսօրվայ նստաշրջանում դուք ամենքդ պէտք է հանդէս գաք այն տարբեր օրինագծերի առիթով, որոնց առաջին հերթին են դրել ներկայ ժամանակի դժուարին հանգամանքները։ Չեմ կասկածում այն իմաստութեան մէջ, որով դուք կը քննէք այդ օրինագծերը, ոչ էլ այն լուսամիտ հայրենասիրութեան մէջ, որը կը դրդէ ձեզ աջակցել կառավարութեանը։ Ես առանձնապէս համոզված եմ նրանում, որ դուք կը շարունակէք բաւարարել մեր թանգագին զօրքի կարիքները, որ կարող է ամեն ժամանակ ցոյց տալ իրան արժանի երկրի սիրոյն ու վստահութեանը և աւելի, քան երբևէ, հանդիսանում է Ռումինիայի գրաւած դրութեան հիմունքը։

«Վստահ դէպի մեր թանգագին Ռումինիայի ապագան, աղօթում եմ Աստուծուն և հայցում նրա օրհնութիւնը ձեր աշխատանքների համար»։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

14—15 նոյեմբ.

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ չէզոք պետութիւնների զինուորական գործակալները հրաւէր ստացան՝ դիտելու Դարդանէլի մօտ պաշտպանողական աշխատանքները։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Բուլղարական լանդտագում արտաքին գործերի մինիստրութեան բիւջէի քննութեան ժամանակ սոց.-դեմ. ներկայացուցիչ Միւլլէրը յայտնեց, որ սոցիալիստները պահանջում են անսահմանափակ իրաւունք տալ քննելու պատերազմի և հաշտութեան նպատակները, ապա պահանջում են գերմանական պետութեան (Էլզաս-Լոթարինգիայով հանդերձ) լիակատար անկախութիւնն ու անձեռնմխելիութիւնը. նրանք պահանջում են Աւստրօ-Ունգարիայի և Թիւրքիայի անձեռնմխելիութիւնը։ Սոցիալիստները մերժում են ամեն տեսակ աննէկսային քաղաքականութիւն։

ՊԱՐԻԶ.— Պատգամաւորների պալատին ներկայացվեց 1916 Թ. բիւջէն, որից երեւում է, որ սկսած 1914 Թ. օգոստոսից մինչև 1916 Թւի մարտի վերջը պատերազմի համար ընդհանուր ծախք է պահանջվում 26,458 միլիոն Փրանկ։

ԱԹԷՆՔ. — Յունաց կառավարութեանը յանձնվեց մի նոտա, որ պարունակում է դաշնակից զօրքերին Մակեդոնիայում տեխնիքապէս ապահովելուն։

ՊԱՐԻԶ.—Երէկ երեկոյեան եկաւ գեներալ Ժիլինսկին գեներալ դ'Ամադի ուղեկցութեամբ։

ԼՈՆԴՈՆ.—Եկաւ կարևոր զինուորական մի պատուիրակութիւն Պետրօգրադից ծովային գեներալ-շտաբի պետ Ռուսինի գլխաւորութեամբ։ Պատուիրակութիւնը արդասիք է Կիտչեների արտայայտած ցանկութեան, Թէ անհրաժեշտ է աւելի սերտ յարաբերութեան մէջ լինել ռուսաց զինուորական իշխանութիւնների հետ։ Այս գործն աւելի դժուար է ներկայանում, քան Ֆրանսիայի հետ յարաբերութիւն պահպանելը, ի նկատի ունենալով Լոնդոնի հեռաւորութիւնը Պետրօգրադից։ Իր խնդիրը կատարելուց յետոյ պատուիրակութիւնը կը մնայ Անգլիայում որոշ ժամանակ։ Ընդգծվում է այն հանգամանքը, որ երբէք աւելի սերտ աշխատակցութիւն դաշնակից ազգերի միջև, աւելի հաստատ վճիռ՝ շարունակելու պատերազմը մինչև իր աջող վախճանը—չէ եղել, ինչպէս ներկայումս։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Սենատը բացատրեց, որ չէ Թոյլատրվում վճարել բողոք ներկայացնել սենատին դատարանների վճիռների դէմ այն քաղաքացիական գործերի առիթով, որոնք վերաբերում են գործող բանակը կանչված անձանց։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ. — «Բերլ. Տիդենդէ»-ին հեռագրում են Բերլինից, որ պապը օտարազգի մեծ պետութիւններից մինի ներկայացուցչի հետ խօսելիս յայտնեց, որ ներկայումս ոչ մի հնարաւորութիւն չէ տեսնում, Թէ հաշտութիւն կը կնքվի շուտով։ Միակ աջողութիւն պապը տեսնում է նրանում, որ այժմ յանցանք չէ համարվում արտասանել «հաշտութիւն» խօսքը։

ՊԱՐԻԶ.—Ցերեկով կայացաւ ի պատիւ Լավէլի ցոյց, որ կազմակերպել էր մարդու իրաւունքի լիգան։ Ներկայ էին նախագահը, դաշնակից մեծ պետութիւնների դեսպանները։ Մինիստր Պենլեվէն և լիգայի նախագահ Ֆէրդինանդ Բիւիսոնը արտասանեցին ճառեր։ Յետոյ մինիստրը դաշնակիցների անունից հանդիսաւոր երդում տուեց վրիժառու լինել Լավէլի մահվան համար, վերականգնելով նահատակ ազգերին՝ աւելի հզօրացրած։

ԽԵՐՍՈՆ.—Թագաւոր Կայսրը նոյեմ. 11-ին բարեհաճեց այցելել Խէրսոն Գահաժառանգի հետ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

14—15 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Սամարայի նահանգական ազնուականութեան պարագլուխ, պետական խորհրդի անդամ Նաումովը նշանակվեց երկրագործութեան մինիստրութեան կառավարիչ։

Վլադիմիրի 3-դ աստիճանի շքանշան է շնորհվում Պետական Դումայի անդամ Պուրիշկևիչին։

Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի ծննդեան օրվայ առիթով, բոլոր եկեղեցիներում մատուցվեց պատարագ և կատարվեց մաղթանք պաշտօնական անձանց ներկայութեամբ։

Պ. Հ. Գ. ստացել է զանազան քաղաքներից տեղեկութիւններ, Թէ այդ օրը կատարվել են հանդիսաւոր մաղթանքներ։

ՄՈՍԿՎԱ.—Բացվեց Քաղաքների Միութեան շրջանային կոմիտէների իրաւաբան-ներկայացուցիչների համագումարը՝ լուծելու համար փախստականներին օգնելու հետ կապված իրաւաբանական հարցերը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Զօրահրամանատար գեներալ Շչէրբաչէվը նշանակվում է Նորին Մեծութեան գեներալ-ադիւտանտ մնալով իր պաշտօնում։

ՊԱՐԻԶ.—Վախճանվեց նախկին մինիստր-նախագահ սենատոր Սարիէնը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Վախճանվեց պալատական, ի. գ. խ. Ռաուխֆուսը, որի առիթով Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան ցաւակցական հեռագիր ուղարկեց Իր հովանաւորութեան տակ գործող՝ մայրութիւնը և նորածին երեխաներին խնամող հասարակական հոգաբարձութեանը, որի խորհրդի նախագահն էր հանգուցեալը։ Դագաղի վրա դրվեց ծաղկէ խաչ Կայսրուհու անունից։

ՏՕԿԻՕ.—Թագադրութեան հանդէսներից վերադարձաւ կայսրը։ Հազարաւոր ամբոխը ցնծագին ողջունում էր նորին մեծութեանը։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Իտալական ազգային կոմիտէտը, ինչպէս տեղեկութիւններ են ստացվել Հռոմից, պահանջել է, որպէս զի Իտալիան պատերազմ յայտարարէ Գերմանիային։

◆ Կոպենհագէնից հաղորդում են, որ իտալական 50,000 զինւոր գեներալ Ամէլիօյի հրամանատարութեամբ ուղարկվել է բալկանեան զօրաճակատը Ալբանիայի վրայով։

◆ Գերմանական պրինց Հոհենլօէն յատուկ միսսիայով մեկնում է Ռումինիա։

◆ Մեսսինայից հեռագրում են. «Այստեղ ստացվել է մի հեռագիր, որ ուղարկված է Աթէնքից մինչև Յունաստանի պատասխանը, որի մէջ ասված է, Թէ դրութիւնը լուրջ է. Սալոնիկի շրջանում կանգնած են 120,000 յոյն զինւոր։ Թնդանօթները ուղղված են դաշնակիցների կողմը։ Ապացոյցներ կան, որ Յունաստանը պատրաստվում է դաւաճանօրէն յարձակվել դաշնակիցների վրա Թիկունքից»։

◆ Աւստրիական զօրքի մէջ տարածված է հետևեալ պաշտօնական սուտ հաղորդագրութիւնը. «Վերջնականապէս պարտված Ռուսաստանը դիմեց, վերջապէս, հաշտութիւն խնդրելով։ Նրա պատգամաւորները եկել են Շվէդիա, ուր կը հանդիպեն մեր և գերմանացի պատգամաւորներին»։ Հաղորդագրութիւնը վերջանում է հետևեալ խօսքերով. «Այդ տեղեկութիւնը պէտք է ձեր սրտերը լցնէ ուրախութեան զգացմունքով՝ նոր յաղթութիւնների համար»։ Բայց Թէ ում է ուղղել Ռուսաստանն իր դիմումը, այդ մասին ոչինչ ասված չէ յիշեալ հաղորդագրութեան մէջ։

◆ Սերբ կառավարութիւնը փոխադրվել է Չեռնոգորիայի մայրաքաղաքը՝ Ցետինիէ։

◆ Կալիշում գլխատվել է մի կին, որ սպանեց գերմանացուց ծնված երեխային. լուրերի համաձայն՝ Կալիշի նահանգում այդ տեսակ երեխաների Թիւը 1000-ի է հասնում։

◆ Գերմանացիք աստիճանաբար հեռանում են Պինսկից։

◆ Թիւրքական մեծաքանակ զօրքեր կենտրոնացել են Մուստաֆայում, Դիզդէարաջում, Վանայում և Բուրգասում։ Թիւրքաց մամուլը պահանջում է վերականգնել Թիւրքիան նախկին սահմաններով։

◆ Ֆէլդմարշալ Ֆրէնչին Լոնդոնից պատուիրագրված է համակերպվել Ժոֆֆրի ցուցմունքներին։

◆ Եւրոպական Թերթերը հաղորդում են, որ բուլղար կառավարութիւնը Թիւրքիային է յանձնել Թիւրքական բանակի 1115 հայ փախած զինւորներին, որոնք Բուլղարիա են ապաստանել։ Հաւանօրէն բոլորն էլ ենթարկվել են մահապատժի։

◆ «В. В.»-ն հաղորդում է, որ վերջին տեղեկութիւնների համաձայն՝ բարոն Չէրկասով և Համադանի ռուսաց գաղութը արդէն գտնվում են Համադանում, ուր կենտրոնացել են մեր զօրքերը Պարսկաստանում խաղաղութիւն մտցնելու համար։

◆ «Р. В.»-ին հեռագրում են, որ Բուշչուկի ազգաբնակութիւնը հեռացնում են քաղաքից։

◆ Պարիզից հեռագրում են, որ այնտեղ լուրեր են պտտվում, Թէ իտալացիք գրաւել են Գօրիցան։

◆ Ժխտվում է «Դէյլի Տէլեգրաֆի» այն տեղեկութիւնը, Թէ գերմանացիք առաջարկել են Սերբիային կնքել անջատ հաշտութիւն, բայց գահաժառանգը վճռապէս մերժել է։

◆ Սիլէզիայում հրդեհը ոչնչացրել է խեղդող գազ պատրաստող գործարանը։

◆ Կարմիր Խաչի ռուս պատգամաւորները հրաժարվել են ճաշել գերմանացի պատգամաւորների հետ։

ՄԻՒԹԹԷՀԻՄ *)

Թիւրք պետութիւնը իր աշխարհածանօթ հայաջինջ քաղաքականութիւնը արդարացնելու համար՝ հեղինակած ունի դիւանագիտական մասնաւոր բառեր և ասութիւններ (Ֆրազներ)։

Նոյն Ֆրազներով, որ մեծ մասամբ հայկական ջարդերուն հետ նուիրագործուելով լոյս աշխարհ կուգան՝ անոնց լայն իմաստ տալով, Թիւրք պետութիւնը զեկուցումներ կը ղրկէ քաղաքակրթեալ աշխարհին և կաղերսէ լուսաւոր քաղաքակրթութեան գութին ու կարեկցութիւնը իր չարաղէտ բաղդին վրայ։ Ապա այդ աղերսագրերուն շեշտ տալով եռանդով կարձանագրէ գերմանական մամուլին ու դիւանագիտութեան մեծ մասը մանաւանդ։

Մեր 1895—96 ի զարհուրելի կոտորածներուն, որ առեն 300,000 հայ անմեղներ ճանճի պէս ջլատուեցան Թափուեցան Թիւրք պետութեան մէկ քմահաճ հրամանին տակ, այդ դժոխային գործունէութեան անունը պետական բառով մկրտուեցաւ՝ «էրմէնի իխթիշաշի (հայկական-խլրտումներ)...։

Ապա՝ Թէ այդ և Թէ Ադանայի կոտորածներու պահուն ջարդարարներուն ձեռամբ գրաւուած հայոց ինչքերը կոչուեցան «Թարթալա» (վեր ի վերոյ ռամիկներու աւարներ)։ Իսկ անտէրունչ և անպատսպար հայ բեկորներուն՝ ամենախեղճ մաքերով բաժնուած ափիկ մը խեղճուկ ողորմութիւնները կոչուեցան «իանէի-միրի» (պետական նպաստ) կամ «նաամէթ-շէհրիարի» (կայսերական շնորհ, ողորմածութիւն) և այլն։

Իսկ այս պահուն նորէն հազար անգամ անմեղ տեղը կոտորուող ընդհանուր դժբաղդ Թիւրքահայութեան՝ չէ մոռցած երբէք դաժան պետութիւնը անուն մը, նորէն դիւանագիտական խժալուր անուն մը կցել իր այնքան անմեղ զոհերուն։ Այդ անունն է ահա՝ «միւթթէհիմ», որը եթէ վերլուծելու ըլլանք, իմաստը պիտի ըլլայ՝ «դաւաճանութեան գործին մասնակցող մարդիկ» (ակնարկելով անշուշտ ռուս բանակին համակրութիւնն ու կամաւորութիւնը)։

Ահա Թէ ինչպէս Թիւրք պետութիւնը Թէ կը կոտորէ մեզ և Թէ կանխաւ ինքզինքն արդարացնելու հնարքն ալ խորհած է։

Գաղթական

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Մենք հաղորդեցինք, որ Վանի զինուորական շրջանապետ գնդապետ Ա. Տէրմէնի առաջարկութեամբ կազմվել է մի յանձնաժողով, որ հոգ պէտք է տանէ հայ կամաւորներից կազմված քաղաքացիական միլիցիայի պահպանութեան համար և կնպաստէ քայքայված Վասպուրականի վերաշինման գործին։

Այդ Յանձնաժողովը արժանացել է Վեհ. Հայրապետի օրհնութեան և ճանաչվել պաշտօնապէս ձեռնհաս զինուորական իշխանութեան կողմից։

Յանձնաժողովը ուղարկել է հետևեալ շրջաբերական-կոչը մեր ազգային հաստատութիւններին և բարեգործներին.

* *

Մեր մայր հայրենիքին և գլխաւորապէս նրա սիրտ Վասպուրականին հասած սոսկալի աղէտից յետոյ, երբ ընդհանուր լքումն առաջ եկաւ հայ ժողովրդի մէջ և Թւում էր, Թէ այլ ևս փրկութեան և ապագայի ոչ մի յոյս չը կայ, մի խումբ վասպուրականցի հայ մտաւորականներ, ամբողջովին տոգորված իրանց հայրենիքի վերածնման և վերաշինութեան տենչով, դիմեցին մեզ, խնդրելով աջակցել իրանց և հնարաւորութիւն տալ՝ վերադառնալ հայրենիք ու վերաշինել քայքայված հայրենի տունը։ Վասպուրականցի մտաւորականներ իրանց յոյսը հիմնել են ռուսաց բարձր իշխանութեան կողմից նորերս Վանի նահանգի կառավարիչ կարգված ռուսական զօրքի գնդապետ Ալֆրէդ Տէրմէնի վրա, որ դիմել էր այդ մտաւորականներին, առաջարկելով կազմել Թիւրքահայերից քաղաքացիական միլիցիա նահանգի ազգաբնակութիւնը աւազակութիւններից և աւարառութիւնից պաշտպանելու և երկրի կարգի ու ապահովութեան վրա հսկելու համար, խոստանալով ամեն տեսակ աջակցութիւն ցոյց տալ և այլ քաղաքակրթական ձեռնարկներին։ Յիշեալ միլիցիան առ այժմ պէտք է բաղկացած լինի երկու հարիւր հոգուց, գլխաւորութեամբ պ. Արմենակ Եկարեանի, որ Վանի ինքնապաշտպանութեան պետերից մէկն է եղել։ Նոր նահանգապետը խոստացել է միլիցիայի զէնքը հայթայթել կառավարութիւնից, իսկ պահպանութեան ծախքը պէտք է հայթայթեն տեղացիները։ Բացի այդ զուտ հայկական միլիցիայից, նահանգապետ Տէրմէնին ուղեկցում են և 100 կօզակներ։ Նահանգապետը խոստանում է տալ վերադարձող հայերին և ազատ հողերը, քանի որ Վանի շրջանում այս րոպէին ահագին քանակութեամբ ազատ հողեր կան, այլ և ամեն տեսակ աջակցութիւն ցոյց տալ հայրենիք վերադարձողներին։

Ի նկատի ունենալով պ. Տէրմէնի այս առաջարկը, վանեցի մի խումբ մտաւորականներ, կազմելով յանձնաժողով այդ առաջարկի իրագործման համար, բայց իրանք զրկված լինելով նիւթական միջոցներից, դիմեցին մեզ՝ խնդրանօք բարոյական և նիւթական աջակցութիւն՝ կազմելու համար այդ միլիցիան և գնալով հայրենիք՝ մտածել վերաշինութեան մասին, մանաւանդ ձեռք բերել ազատ մեծաքանակ հողերը հայ գիւղացիների և երկրագործների համար։

Ներքոյ ստորագրեալներս, քննելով այդ առաջարկները, բանակցելով պ. Տէրմէնի հետ, լսելով նրա բերանից այդ առաջարկները, որ նա պաշտօնական գրութեամբ յայտնել է և Նորին Վեհ. Կաթողիկոսին Ամենայն Հայոց, գտանք, որ անհրաժեշտ է ցոյց տալ վասպուրականցիներին այդ բարոյական և նիւթական օգնութիւնը։ Սակայն նախ քան գործի ձեռնարկելը, հարկ համարեցինք առանձին գրութեամբ և ի ձեռն պատգամաւորների զեկուցանել այդ ամենի մասին Վեհ. Կաթողիկոսին և խնդրել Նորին Վեհափառութեան հաւանութիւնը, և հրահանգը։

Ազգիս Վեհ. Հայրապետը, ինչպէս պաշտօնապէս հաղորդեց մեզ Հայրապետական Դիւանը իր 10 հոկտ. № 1755 գրութեամբ, բարեհաճել է յայտնել, որ «Հայ գիտակից մասի այն բոլոր ջանքերը և աշխատանքները, որոնք իրապէս նպաստելու են Վասպուրականի, մասնաւորապէս Վան քաղաքի վերաշինութեան, բարեկարգութեան և Վասպուրականի ազգային-կրօնական հաստատութիւնների, վանքերի, եկեղեցիների, դպրոցների և այլ պատմական յիշատակարանների պահպանութեանն ու բարգաւաճմանը, այս ամենը, բնականաբար, արժանանալու է Վեհ. Հայրապետի քաջալերութեանը, բարձր հաւանութեանը և օրհնութեանը»։ Ուստի և Վեհ. Հայրապետը օրհնում է և մաղթում աջողութիւն վերոյիշեալ ազգաշէն սկզբունքների իրագործման մէջ։

Բացի դրանից Վեհ. Հայրապետը «անպայման անհրաժեշտ է գտել հայ ժողովրդի, առանձնապէս հայ բոլոր կուսակցութիւնների համերաշխ և համամիտ գործունէութիւնը և վերոյիշեալ ծրագրի միահամուռ ուժերով իրագործելը», ինչ որ և մեր անկեղծ ցանկութիւնն է։

Միևնոյն ժամանակ Հայրապետական Դիւանը յայտնել է, որ Վեհ. Հայրապետը բարեհաճել է իր տրամադրելի գումարներից 3000 ր. յատկացնել այդ նպատակի համար և այսուհետև ևս կը յատկացվեն այդ նպատակով գալիք բոլոր գումարները։

Վեհ. Հայրապետի այս քաջալերիչ օրհնութիւնը և գործի ազգաշէն նպատակը ստիպեց մեզ ներքոյ ստորագրողներիս կազմել «Հայաստանի վերաշինութեան Յանձնաժողով»՝ աջակցելու վասպուրականցի և Թիւրքահայ մտաւորականներին՝ վերաշինելու իրանց քայքայված տները և առ հասարակ ամեն կերպով աջակցելու հայրենիքի վերաշինութեան և վերածնութեան սուրբ գործին։

Ուստի և ի նկատի ունենալով այս ամենը, ներքոյ ստորագրեալներս որոշեցինք դիմել մեր ազգային բոլոր ձեռնհաս մարմիններին, կազմակերպութիւններին, կարող ու գիտակից անհատներին՝ առանց որևէ խտրութեան՝ և խնդրել նրանց համերաշխ ու միաբան օգնութիւնը, բարոյական և նիւթական, ի նկատի ունենալով որ մեր ձեռնարկած գործը լոկ քաղաքակրթական է և շինարար։

Յանձնաժողովս վստահ և լիայոյս, որ դուք կը համակրէք մեր առաջադրած նպատակին, դիմում է ձեզ խնդրանօք ցոյց տալ մեզ ձեր բարոյական և նիւթական աջակցութիւնը, ինչպէս և խորհուրդները, ու միանալ մեզ հետ հայրենիքի վերաշինման մեծ գործը գլուխ բերելու համար։

Գործի համար անհրաժեշտ դրամական նուէրները կարելի է ուղարկել կամ Ամենայն Հայոց Կաթողիկոսին կամ ուղղակի ուղարկել Յանձնաժողովի նախագահ Դաւիթ-խան Ասան-Իւզբաշեան հասցէով (Тифлисъ, ул. Петра-Великаго, собст. домъ Давиду Богдановичу Аванъ-Юзбашеву Хану Сакнакскому).

Նախագահ Յանձնաժողովի՝
Դաւիթ-խան Ասան-Իւզբաշեան
Փոխ-նախագահներ՝
Հ. Առաքելեան, բժիշ. Բ. Նաւասարդեան
Անդամ-գանձապահ՝
Ալ. Մելիք-Ազարեան
Անդամներ՝ Միք. Արամեանց, Յ. Թումանեան, Միք. Աթաբէկեան, Յակ. [illegible], Ստեփան [illegible], Ալեքսէյ [illegible], Ստ. Մալխասեանց (քարտուղար), Մ. Մինասեան։

ԱՌԱՆՁԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Մենք յայտնել էինք, որ առանձին խորհրդակցութեան մէջ Մեծ Իշխան Փոխարքայի պահանջով խորհրդակցութիւնը բաժանվեց 3 սեկցիայի—պարենաւորման, տրանսպորտային և բնակարանային։

Նոյեմբերի 14-ին Փոխարքայի նախագահութեամբ նորից տեղի ունեցաւ բոլոր սեկցիաների ընդհանուր ժողովը, որտեղ սեկցիաների նախագահները զեկուցին իրանց մշակած բանաձևերի մասին։

Առաջ ենք բերում այդ բանաձևերի կարևոր կէտերը։

Պարենաւորման սեկցիայի նախագահ Ալ. Խատիսեան զեկուցեց սեկցիաների միացեալ նիստում ընդունված ընդհանուր ցանկութիւնների մասին։

Սեկցիան անհրաժեշտ է գտնում, որ պետութիւնը ընդարձակօրէն նպաստաւորի վարկային հիմնարկութիւններին, սպառողական ընկ. և ուրիշ կոօպերատիւներին, նրանց միութիւններին ու կազմակերպութիւններին, որոնք զբաղվում են պարենաւորման գործերով այն սկզբունքներով, ինչ որ քաղ. վարչութիւնները։ Սեկցիան յոյս ունի, որ բաւականաչափ զարկ տալու է հասարակական կազմակերպութիւնների իրաւունքները հարկաւոր կերպով ապահովելու դէպքում, այդ կազմակերպութիւններն իրանց վրա կարող են վերցնել Թանգութեան դէմ կռուելու բարդ աշխատանքները և դրա ամբողջ պատասխանատուութիւնը։ Սեկցիան անհրաժեշտ է գտնում Թանգութեան դէմ կռուելու համար լայնապէս զարգացնել մունիցիպալիտետային ձեռնարկութիւնները, այն է՝ սպանդանոցը, հացթխարանները, մթերքների պահեստները և այլն։ Սեկցիան անյետաձգելի անհրաժեշտ է գտնում, որ քաղ. վարչութիւններին իրաւունք տրվի միանալ մի դաշնակցութեան մէջ որոշ միասնական նպատակների համար։ Սեկցիան անհրաժեշտ է գտնում անհրաժեշտ մթերքների վրա սահմանել համակայսերական սակագին։ Կովկասի բոլոր խորհրդակցութիւնների գործունէութիւնը միացնելու համար, սեկցիայի կարծիքով, երկրագործական դեպարտամենտի Կովկասի լիազօր դիւանատան կից պէտք է հաստատել համակովկասեան պարենաւորման խորհրդակցութիւն։ Բացի այդ սեկցիան անհրաժեշտ է գտնում քաղաքներում կազմել [illegible] հաղորդակցութիւններ, քաղաքային կանոնադրութեամբ սահմանված [illegible] պարտաւորութիւնները կատարելու։

Սրանք՝ ընդհանրապէս Կովկասի քաղաքների համար. իսկ մասնաւորապէս Անդրկովկասի գիւղերի համար սեկցիան անհրաժեշտ է գտնում.

1) Անմիջապէս ձեռնարկել վիճակագրութեան, պարզելու համար մթերքի կարիքները տեղերում։ 2) Միջոցներ ձեռք առնել գիւղական ազգաբնակութիւնը կենսամթերքով ապահովելու, այն է՝ սերմացու, աշխատաւոր անասուններով և աշխատաւոր ձեռքերով, նաև բուժական նիւթերով [illegible] համար, և այլն։

Միւս սեկցիաների նախագահները նոյնպէս զեկուցեցին իրանց ընդունած որոշումները, որից յետոյ Ն. Կ. Բարձրութիւնը շնորհակալութիւն յայտնեց խորհրդակցութեան մասնակիցներին՝ նրանց աշխատանքների համար և յայտնեց, որ Իրան անհրաժեշտ է լսել նաև [illegible] գլուխ կանգնող մարդկանց կարծիքները։

Ես կարող էի իւրաքանչիւրին առանձին հարցնել այստեղ,—ասաց Մեծ Իշխանը,—արտայայտուել, բայց այդ կերկարացնէր գործը։ Այդ պատճառով Ես կառաջարկեմ նրանց քննել ձեր աշխատանքները և կազմել ընդհանուր գնահատութիւնը. Եթէ նրանք արտայայտեն այլ տեսակէ ցանկութիւններ, ապա նրանց կարծիքները ձեզ կը յայտնուեն հետևեալ նիստում Իմ նախագահութեամբ և դուք կարող եք նրանց [illegible]։ Եթէ լինեն տարաձայնութիւններ, Ես յոյս ունեմ, որ դուք ճանապարհ կը գտնէք համաձայնութեան։

Այս խօսքերով Ն. Կ. Բարձրութիւնը

---

*) Մեղապարտներ։

փակից խորհրդակցութեան երկրորդ նախապատրաստական նիւթը։

—

Նոյն օրը, այսինքն նոյեմ. 14-ին, ցերեկ. ժամը 4-ին, Փոխարքայի քաղաքացիական մասին օգնական Ն. Ն. Եանուշկեվիչի նախագահութեամբ սկսվեց նահանգապետների և ադմինիստրացիայի գլուխ կանգնած անձանց խորհրդակցութիւնը, մանրամասն քննելու առանձին խորհրդակցութեան սեկցիաների որոշումները։

Ընդունված որոշումների մասին կը հաղորդենք առանձին։

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐ. ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, նոյեմբ. 15-ին, հոգևոր իշխանութեան կողմից նշանակված էր Գայիանեան օր. դպրոցի հոգաբարձութեան ընտրութեան համար ծխականների ընդհանուր ժողով։

Մօտնու եկեղեցու ա. քահ. Յովհաննէս Տէր-Գրիգորեանը, ժամը 12-ին բանալով նիստը, ներկայութեամբ 22 ծխականների, յայտնեց, որ, համաձայն Նոր ծխական կանոնադրութեան՝ հաստատված Վեհ. Կաթողիկոսից, ծխական ժողովը համարվում է կայացած, որքան և լինի իրաւասու ծխականների թիւը, և առաջարկեց ընտրել ժողովի նախագահ։

Ժողովը նախագահ ընտրեց միաձայն Հ. Առաքելեանին և քարտուղար՝ Ա. Մխիթարեանին։

Նախագահը յայտարարեց, որ ծխական ժողովի օրակարգի խնդիրներն են. 1) Գայիանեան օր. դպրոցի երեք տարվայ հաշիւների քննութիւնը և հաստատութիւնը, 2) նոյն դպրոցի ներկայ ուսումն. տարվայ (1915—16 թ.) նախահաշվի քննութիւնը և հաստատութիւնը, 3) ընտրութիւն 4 հոգաբարձուների և 3 փոխ-անդամների։

Ժողովականներից ոմանք հարց յարուցին, թէ արդեօք աւելի լաւ չէ յետաձգել ժողովը մի ուրիշ անգամի, ի նկատի ունենալով ծխականների սակաւաթիւ լինելը և այն հանգամանքը, որ ծխականներից շատերին յայտնի չէ դուցէ նոր կանոնադրութիւնը։ Ոմանք անօգուտ էին գտնում յետաձգել ժողովը այն պատճառաբանութեամբ, որ առաջին՝ պաշտօնական յայտարարութիւնների մէջ լրագիրներում յիշված է նոր կանոնադրութեան պահանջը, երկրորդ՝ որ ոչ մի ապահովութիւն չը կայ, թէ մի այլ անգամ կը հաւաքվի ծխականների աւելի մեծ թիւ, երրորդ՝ որ հոգաբարձական կազմի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրացել է դեռ մայիս ամսին և հաշւետուութիւնը, նոր կազմի քննութիւնը, ինչպէս և նախահաշվի քննութիւնն ու նոր կազմի ընտրութիւնը պէտք է կատարվէին դեռ մայիս ամսին։

Նախագահ Հ. Առաքելեան, ամփոփելով կարծիքները, յայտնեց, որ ժողովը օրինաւորապէս կայացած է համաձայն կանոնադրութեան, բայց որովհետև հարց է ծագել շարունակելու կամ յետաձգելու մասին, այդ հարցի որոշումը թողնում է ժողովին։

Գաղտնի քուէարկութեամբ 13 ձայնով ընդդէմ 8-ի որոշվում է շարունակել ժողովը։

Կարդացվում է դպրոցի երեք տարվայ հաշիւների և գործունէութեան տեղեկագիրը (1912—15 թ.թ.) և վերստուգող յանձնաժողովի զեկուցագիրը, որ գտել էր բոլոր հաշիւները ճիշդ և կանոնաւոր։ Վերջին 3 տարվայ ընթացքում հոգաբարձութիւնը դեֆիցիտ է ունեցել 2931 ռ., իսկ ներկայ ուսումն. տարվայ (1915—16 թ.թ.) ընթացքում նախատեսվում է նոյնպէս դեֆիցիտ 1847 ռ., որով նախահաշվի մէջ դեֆիցիտ ցոյց է տրված 4778 ռուբլի։

Հոգաբարձութեան կողմից բացատրութիւն է տալիս նախագահ Ն. Տէր-Ղևոնդեանը, շեշտելով ծխականների անտարբերութիւնը դէպի իրանց դպրոցը։ Թէ այդ բացատրութիւններից և թէ հաշիւից երևում է, որ հոգաբարձութիւնը ամեն ջանք գործ է դրել և չէ խնայել աշխատանք և կարողացել է համեմատաբար փոքր գումարով (18,000 ռ.) պահպանել մի միջնակարգ օրիորդաց դպրոց։ Առանձնապէս իրանց աշխատութեամբ աչքի են ընկել հոգաբարձուներ Ս. Մուրադբէկեանը և Մ. Պետրոսեանը։

Նախագահ Հ. Առաքելեան առաջարկում է ժողովին շնորհակալութիւն յայտնել հոգաբարձութեանն իր եռանդուն և արդիւնաւէտ գործունէութեան համար։ Ժողովը ընդունում է այս առաջարկը միաձայն և հաստատելով հաշիւները անցնում է նախահաշվի քննութեանը։ Իբրև մուտք նախահաշված էր 19,750 ռ., ծախք՝ 21,650 ռ., հետևաբար դեֆիցիտ 1947 ռ., որ նախորդ տարիների դեֆիցիտի հետ (2331 ռ.) կազմում է 4778 ռ.։

Ժողովը հաստատում է այս նախահաշիւը, թողնելով որ նոր ընտրելի հոգաբարձութիւնը միջոցներ որոնէ այդ դեֆիցիտը ծածկելու համար։

Նախագահը առաջարկում է անցնել ընտրութիւններին։ Ժողովական Բ. Մխիթարեան առաջարկում է վերընտրել նախկին կազմը միաձայն։ Հոգաբարձուներ Տէր-Ղևոնդեան և բժ. Տ. Թադէոսեան առաջարկում են թարմացնել կազմը, մանաւանդ որ հոգաբարձուներից երկուսը (Ռ. Խաչատրեան և Բ. Յովհաննիսեան) հրաժարվել են և նրանց տեղ գործում են եղել անձնափոխանորդները։

Նախագահը յայտնում է, որ ընտրութիւնը պէտք է կատարվի գաղտնի քուէարկութեամբ և ժողովը լիակատար իրաւունք ունի վերընտրել նախկին հոգաբարձուներին, մտցնելով նրանց անունները ընտրելիների շարքը, և առաջարկում է տալ կանդիդատների անուններ։

Առաջարկված կանդիդատներից, գաղտնի քուէարկութեամբ, ընտրվում են հոգաբարձուներ հետևեալ 5 անձինք. Ս. Մուրադբէկեան, Պօղոս Դօլուխանեան, Հ. Առաքելեան և Մ. Պետրոսեան, իսկ անձնափոխանորդներ՝ Ն. Տէր-Ղևոնդեան, բժշկ. Տ. Թադէոսեան և Բ. Առաքելեան։ Ընդ սմին ժողովը որոշում է յանձնարարել հոգաբարձութեանը՝ հրաւիրել անձնափոխանորդներին հոգաբարձական նիստերին՝ ձայնի իրաւունքով և միջնորդել հոգևոր կառավարութեան առաջ հաստատել բոլոր 7 ընտրեալներին հոգաբարձու, ի նկատի ունենալով որ Գայիանեան դպրոցը ոչ թէ ծխական դպրոց է, այլ միջնակարգ։

Ապա ժողովը ընտրում է վերստուգող յանձնաժողովի անդամներ պ. պ. Ս. Օրդուխանեանին, Դուդուկեանին և Ա. Նազարեթեանին։

Նախագահը փակում է ժողովը ժ. 2-ին։

Վ. ԼՈՄԹԱԹԻՁԷԻ ԹԱՂՈՒՄԸ

Շաբաթ, նոյեմբերի 14-ին, Սարատովից Թիֆլիս բերվեց երկրորդ Պետական Դումայի անդամ Վիկենտի Լոմթաթիձէի մարմինը։ Երեկոյեան ժամը 4-ին գնացքը կանգ առաւ Թիֆլիսի կայարանում, ուր սպասում էր բանւորներից բաղկացած բազմութիւնը, որ հէնց գործարաններից շտապել էր կայարան։

Վագոնը բացվելուն պէս՝ հէնց որ երևաց բազմերանգ պսակների մէջ թաղված դագաղը, բազմութիւնը, որպէս մի մարդ, լուռ ու մունջ գլուխ խոնարհեցրեց դեպուտատի դագաղի առաջ։ Վագոնից դուրս բերվեցին նախ պսակները, թւով 48 հատ, որ Սարատովից մինչև Թիֆլիս դրել էին դագաղի վրա բանւորական, ուսանողական և հասարակական զանազան ներկայացուցիչներ, ապա դագաղը, որը կայարանից մինչև Քաշվէթի եկեղեցին ամբողջ տարածութիւնը տարվեց ձեռքերի վրա։ Սգահանդէսը եկեղեցի հասաւ երեկ. ժամը 7-ին։

—

Կիրակի առաւօտեան, դեռ ժամը 10-ին, արդէն եկեղեցու թէ ներսը և թէ դուրսը լիքն էր հանգուցեալի գաղափարակից ընկերներով և յիշատակը յարգող հասարակութիւնով։

Պատարագը վերջանալուց յետոյ եկեղեցում առաջին դամբանականը խօսեց Թալակվաձէ քահանան, որը համառօտ և ազդու իր ճառի մէջ դրուատեց հանգուցեալ դեպուտատի ունեցած գործունէութիւնը։ Եկեղեցուց դագաղը դուրս բերելուց յետոյ, եկեղեցու գաւթում խօսեց Պետական Դումայի նախկին պատգամաւոր Եւգ. Գեգեչկորին, որը տուեց հանգուցեալ Լոմթաթիձէի տաժանակիր կեանքի հարազատ նկարագիրը։

Ապա սգահանդէսը բազմահազար ժողովրդի մասնակցութեամբ ուղղվեց Գոլովինսկի պրօսպէկտով դէպի ս. Նինայի ուղղափառ գերեզմանատունը։ Անցնելով Վէրայի կամուրջը, Ժողովրդական Տան մօտ դագաղին հանգիստ տալով հոգեհանգիստ կատարելուց յետոյ սգերթը նորից շարժվեց և ժամը 2-ին հասաւ գերեզմանատուն։ Բազմաթիւ դամբանախօսութիւններ ռուսերէն և վրացերէն լեզուներով եղան գերեզմանատանը և խօսեցին Թիֆլիսի, Գուրիայի, Քութայիսի, Բաթումի և Գորիի բանւորութիւններից և այլ հիմնարկութիւններից ներկայացուցիչներ։

Այդ օրը ևս, չը նայելով 2 դիակառքեր էին ուղեկցում, դագաղը եկեղեցուց մինչև գերեզմանատուն տարվեց նոյնպէս ձեռքերի վրա։ Պսակների թիւը հասնում էր հարիւրի, մի մասը Ռուսաստանի զանազան քաղաքներից, իսկ միւս կէսը Թիֆլիսից և Կովկասի զանազան տեղերից։

Թաղման հանդէսի կարգապահութեան ամբողջ պատասխանատուութիւնն իր վրա էր վերցրել Եւգ. Գեգեչկորին, և, պէտք է ասել, տիրում էր օրինակելի կարգապահութիւն։

Ժամը մօտ 4-ին վերջացաւ թաղման արարողութիւնը, և նոյն բազմահազար ժողովուրդը խորհրդաւոր լռութեան տակ հեռանում է գերեզմանատնից՝ բարձրացնելով մի երրորդ գերեզմանաթումբ ևս այնտեղ, որտեղ 8 տարի սրանից առաջ թաղվել են նոյն Պետական Դումայի անդամներ Արչիլ Ջափարիձէն և Սեվերիան Ջուղելին։ Մ.

ՓԱՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Կ. Հ. Բարեգ. Ընկ. անդամ Միք. Մերբութեան յայտնեց մեզ, որ Բարեգործական Ընկ. Ցխինվալի ճիւղի վարչութիւնը Ցխինվալի հայ հասարակութիւնից հաւաքել է 10 մեշօկ լօբի և 25 մեշ. ալիւր, որ պէտք է ուղարկվի Էջմիածին, Կաթողիկոսի անունով, փախստականների կարիքների համար։ Ցխինվալի ճիւղի վարչութեան հաւաքած այս մթերքների հետ միասին Կ. Հ. Բ. Ընկ. Գորու և Սուրամի ճիւղերն իրանց հաւաքած իրերը մի վագոնով պէտք է ուղարկեն Էջմիածին։

Հ. Կենտրոնական կոմիտէտը Երևանի-նահանգի գիւղերի գաղթականների համար յատկացրել է 2000 ռ., Գորու շրջանի փախստականների համար վերմակներ պատրաստելու և գնելու համար՝ 5000 ռ.։

ԼՈՒՐԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Երևան, 30 հոկտ.

Վերջին օրերս Վանից վերադարձողները սփոփիչ լուրերի հետ հաղորդում են նաև տխուր ու ցաւալի տեղեկութիւններ։ Ռուս բանակի վերջին նահանջից յետոյ հազարից աւելի քիւրդեր մտել են Վան և կողոպտելով միասին այրել են 50-ից աւելի կարեւոր տներ, որոնք նախկին հրկիզումից զերծ էին մնացել. Նրանք այրել են նաև Արարուց Թաղի մեծ եկեղեցին, որ Վանի մայր եկեղեցին կարող էր համարվել, լինելով Այգեստանի ամենամեծ թաղի եկեղեցին, նոյնպէս էլ նոյն թաղի վարժարանի հսկայ շէնքն ու Քաղաքամէջի Տիրամայր եկեղեցին։ Արարքի եկեղեցին հէնց այն եկեղեցին է, որ ապրիլեան դէպքերի սկզբին դաշնակցական խմբերի անհեռատեսութեան ու թուլութեան պատճառով թիւրքերի ձեռքն ընկաւ, որը նրանք վերածելով ռազմական դիրքի՝ կրակ էին տեղացնում հայոց թաղերի վրա։ Թիւրքերն իրանց շտապ փախուստի միջոցին ժամանակ չէին ունեցել այրելու եկեղեցին, որը հայերը մեծ ուրախութեամբ ետ ստացան. իսկ այժմ այն ևս հրոյ ճարակ է եղել, ինչպէս նրանից առաջ եղել էին Այգեստանի միւս բոլոր եկեղեցիներն ու վարժարանների մեծագոյն մասը։ Այնպէս որ այժմ Այգեստանում հայերը ոչ մի եկեղեցի ու վարժարան չունեն կանգուն։ Վանի վերաշինութեան հոգը ստանձնող յանձնաժողովն այս ամենակարեւոր պէտքերի համար էլ հոգս է տանելու։

Թիւրքերը այրել են նաև գերման միսիոնարական և օրբանոցի հսկայ շէնքերը, դաշնակից կառավարութեան դրօշակի ներքև ապաստանող 200-ից աւելի ծեր, կին ու երեխաների հետ, որոնք այն տեղում ապահով ապաստան գտած լինել կարծում էին ու վերջին վտանգի վայրկեանում հնարաւորութիւն չէին ունեցել փախչելու։ Սրանով թիւրք բարբարոսութիւնն էլի նոր ապացոյց է տալիս, որ նա ոչ մի սրբութիւն չէ ճանաչում և որ նրա համար բարեկամ, մինչև անգամ զինակից պետութեան դրօշակն իսկ ոչ մի զանազանութիւն չէ ներկայացնում, երբ խնդիրը կայանում է հային ջարդելում, նրա անմեղ արիւնը խմելում։

Այժմ Վան քաղաքում գտնվում են 2000-ի չափ վերադարձող գաղթականներ, նրանցից ոմանք ընտանիքով միասին. աւելի մեծ ժողովուրդ գտնվում է քաղաքի հիւսիսային շրջակայ գիւղերում, գլխաւորապէս Թիմարի գաւառում, իսկ հարաւային՝ Հայոց-Ձորի, Կաւաշի և այլ գաւառների գիւղերը խսպառ թափուր են, նոյնպէս և Շատախի, Մոկսի և ուրիշ լեռնային գաւառներ։ Վերադարձող գիւղացիների նպատակն է եղել իրանց հունձքերը քաղել ու վերցնել և առաջիկայ տարվայ համար ցանքսեր անել։ Չենք իմանում, թէ որ աստիճանի աջողել են. իսկ քաղաքացիների նպատակն է տիրութիւն անել իրանց տներին և զերծ պահել նրանց առաջիկայ ձիւն ու անձրևներից փուլ գալուց։ Սպասում ենք, որ Վանի նորահաստատ կառավարութիւնն էլ հոգս տանի այդ մասին, չը թողնելով որ թափուր տները, որոնց տէրերը չեն վերադարձել, ձիւն ու անձրևի ներքև մնալով փուլ գան, թէկուզ այդ լինի հակադիր ուղղութիւն հանդէպ նրանց, որոնք կարծես առանձին հաճոյքով նախաձեռնարկ եղան Վանի նշանաւոր տները, վարժարանները, Նորաշէնի եկեղեցին և ուրիշ շինութիւններ այրելու ու քանդելու։

Վերադարձողներն աւելի շատ կը լինեն, եթէ երկրում ուտեստ գտնելու դիւրութիւն ունենան. որովհետև ասում են, որ տներից բոլոր հացեղէնները հաւաքվել, վերցվել են, նաև հաւաքել և Ռուսաստան են ուղարկել պղնձեայ ամանները, որովհետև թալանչիներն այդպիսի ծանր իրեղէնները մեծ մասամբ թողել էին, փոխադրելու դիւրութիւն չունենալով, իսկ Վանի տներում պղնձեղէններ մեծ քանակութեամբ կային։ Անշուշտ կառավարութիւնը կամ նպաստամատոյց մարմինները ժողովրդի սննդեան մասին էլ հոգ տանում են, ինչպէս տանում են բժշկական և սանիտարական կարիքների համար։

Հոկտ. 18-ից սկսած Երևանում բացվել են գաղթականական վարժարաններ գաղթական ուսուցիչ ուսուցչուհիներով՝ գաղթական աշակերտների համար։ Հնարաւորութիւն չը լինելով առանձին շէնք վարձելու, դպրոցները բացվել են հէնց Երևանի ծխ. վարժարանների շէնքերում ժ. 2-ից մինչև 5-ը՝ նոյն վարժարանների աշ.-աշակերտուհիների ցրվելուց յետոյ։

Վանեցի

ՔԱՒՈՐ-ԱՂԱՆ ԵՒ ՍԱՆԱՄԱՅՐԸ

Տ. Նազարեանի ճաշարան-ապաստարանի մէջ ծնված ու մկրտված նորածին Հրատապի մայրը, Նիգեար խաթուն, այնպէս քաղցր ու սիրալիր տոնով մը քաւոր-աղա կը կանչէ Տ. Նազարեանին, որ կարծես թէ «Հրատապ-Սփոփանքի» անօրէնը երկար տարիներէ ի վեր իրենց քաւորը եղած է։

Գաղթականները ճաշարան խռնուած են ճաշելու, մէկ ալ տեսար հեռուանց արագ քայլերով կը յառաջանայ Նիգեար-խաթունի քաւոր-աղան։

— Վայ ես քո տներուն ղուրբան եղնիմ, քաւոր-աղա,—կըսէ Նիգեար-խաթուն և իր քաւորը կը ցուցնէ զինք շրջապատողներուն։

— Հրատապը ինչպէս է։

— Շատ աղէկ է, քեզ մեռնիմ, Աստուած քեզի սաղութէն տայ, Քրիստոսի աջն ու խաչը քեզ պահապան եղնի։

Քաւոր-աղան կը նստի, ճաշարանի ամենօրեայ հիւրերը կը շրջապատեն զինք. հարցումներու և խնդրանքներու հեղեղ մըն է, որ իր գլխին կը թափուի։ Զարաճճի մանչ մը մօտենալով կը պօռայ։

— Քաւոր-աղա, տես, տներս բաբիկ են։

Անմիջապէս իրեն կօշիկ կը տրուի։ Քաւոր-աղան նորակառոյց շէնքը կը մանէ։ Հոն է նորածին Հրատապը, որուն երեսը բանալով ուրախութեամբ կը դիտէ հեղհեղէ աճող Հայաստանի բեկորիկը։

— Տես, իմալ խօրօտիկ ա, ուր պապ էլ էստը պէս խօրօտիկ էր... Աստուած օրօրմի ուր պապու հոգուն...,—կըսէ Նիգեար-խաթունը։

Քաւոր-աղան իր ամենօրեայ այցելութեամբ յոյս և քաջալերութիւն, մխիթարանք ու սէր կը ներշնչէ իր տառապեալ եղբայրակիցներուն, որոնց պատսպարութեան, սննդի, զգեստեղէնի, գործի և այլն բոլոր հոգսերը երեք ամիսէ ի վեր է որ կը հոգայ։

— Ի՞մալ պիտի եղնէր մեր հալը, թէ որ էստա ճաշարանը չեղնէր,—կը հարցնեն իրարու «Հրատապ Սփոփանքի» ամենօրեայ հիւրերը։

Եւ իրաւ՝ շատ լուրջ հարցում է. ինչ պիտի ըլլար Թիֆլիսի թշուառ գաղթականներու վիճակը եթէ չըլլար Տ. Նազարեանի ճաշարան-ապաստարանը։

—Ա՜խ օրն էն օր եղնի, որ մեր վերան վաթանն ու տները շինենք, մենք մեր խաղ ու ջրի վրէն էրթանք։ Իմ խօրօտիկ թոռ լէ բոյ կը քաշայ կը ճոխնայ, օր մը լէ տեսար քաւոր-աղէն մըր երկիր կը կանչենք, հարսնիք կէնենք, քէֆ կը քաշենք։ Թօ՞, ծօր ա էն օր, եարաբ տիր մը լէ մեր խաղն ու ջուր պիտ տեսնենի՞ք։

—Աստուած քո ձայնը լսէ և կատարէ խնդիրքդ,—կըսեմ սանամօր և կը հեռանամ։

Հ. Աճէմեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բարեյաջող եղանակներ

Նոր-Բայազէտ, 7 նոյեմբերի

Եթէ մի կողմից գաղթականները նեղ դրութեան մէջ են ապրում՝ սննդի, հագուստեղէնի և այլ կողմերից, միւս կողմից նրանք մի փոքր մխիթարված են բարեյաջող եղանակներից, որոնք այս տարի տեղի ունեն մեզանում։ Երկինքը անամպ, կապուտակ, արևը ջերմ ու փայլուն, գետինը չոր ու մաքուր, օրերը տաք, ինչպէս գարնան։ Ոչ մի անձրև, ոչ մի թացութիւն, որպիսի բարեյաջող եղանակների տակ գոնէ փախստական-գաղթականները կարողանում են իրանց օրը անցնել առանց տաք հագուստի, շատերը շրջելով նոյնիսկ ոտաբոբիկ, կիսամերկ դրութեամբ։ Այսպիսի բարեյաջող եղանակներ մեր ծերերն անգամ չեն յիշում, որ նոյեմբերին Նոր-Բայազէտի սարերն ազատ լինէին ձիւն ու բորանից, որ հանգիստ արածէին հօտերն ու նախիրները և այլն։ Գ. Սինանեան

—

Անզգուշութեան զոհը

Հին-Նախիջևան, 6 նոյեմբերի

Հոկտեմբերի 30-ին Հին-Նախիջևանի գաւառի Նեխրամ գիւղում մի ցաւալի դէպք պատահեց. այդ օրը 5 տարեկան Արամը և իր 7 տարեկան եղբայր Մկրտիչը պառաւ մամի հետ գնում են հանդը բամբակ հաւաքելու. մամը լուցկին տալիս է երեխաներին, որ կրակ վառեն տաքանան, ինքը արտի միւս ծայրում աշխատում է բանւորների հետ. կրակից կպչում են Արամի շորերը, երկու երեխաների աղիտաւոր ճիչ ու բղաւոցը չեն հասնում ո՛չ մամի և ոչ միւս բանւորների ականջին, և այդպէս թշուառ Արամը կենդանի այրվում է և զոհ է դառնում անմիտ անզգուշութեան...

Սով է մեզանում. ամեն ինչ օրէ-օր թանգացնում են. ինչ որ առատ է, նոյնպէս թանգացնում են. կարծես այդ թանգութիւնը արհեստական լինի... Ամառը չոր անցաւ, աշունը չորային է և շատ նպաստաւոր բամբակի հաւաքելուն։

Օր. Լ. Տէր-Ստեփանոսեան

—

Որբերի դրութիւնը

Մեծ-Ղարաքիլիսա, 6 նոյեմբ.

Շրջանիս գաղթականութիւնը գտնվում է ծանր դրութեան մէջ։ Ամենքն էլ սոված, ամենքն էլ անօգնական։

Ահա երկու շաբաթ է, որ փախստականներին չի բաժանված ոչ մի կոպէկ և ոչ մի ֆունտ ալիւր. Թշուառ տարագիրներից շատերը, մուրացկանի պարկը շալակին, խումբ խումբ դիմում են շրջակայ գիւղերը հաց, ալիւր ու կարտօֆիլ մուրալու...

Փախստականների վիճակը մի քանի շաբաթ առաջ բաւական մխիթարական էր, բայց ընդհանուր պատկերը յանկարծակի մռայլ գոյն ստացաւ։

Տեղիս «Եղբ. Օգ.» կոմիտէն մատնված է համարեա անգործութեան... Նրա եռանդուն, բարեխիղճ ու կարող անդամներից շատերը դժգոհ ներկայ նախագահից՝ գործից հրաժարվել են։

Ամեն օր հարիւրաւոր սոված ու մերկ փախստականներ թափվում են գրասենեակ «հաց, օգնութիւն» աղերսելու։

Նրանց լաց ու աղաղակը մնում է անարձագանք. նրանց դրութիւնը դառնում է օրհասական։

Գաղթականների գլխաւոր մարմինների ուշադրութիւնն եմ հրաւիրում փախստականների ծանր կացութեան վրա։

Մ. Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ներկայումս Թիֆլիսում է գտնվում Պետ. Դումայի անդամ Միքայէլ Պապաջանեանը։ Երէկ նա այցելեց Թիֆլիսի օրբանոցները։

◆ Կիրակի, նոյեմբ. 15-ին, Տ. Նազարեանի փախստականների ապաստարան-ճաշարանում եղաւ մի նոր (3-րդ) մկրտութիւն։ Կնքահայրութիւնը ստանձնել էր Հայոց Դրամատիկ. դերասանների Ընկերակցութիւնը. կնքահայրը դերասան Աբէլեանն էր, իսկ սանամայրը՝ տ. Սիրանոյշը։ Ներկայ էր դերասանական խումբը։ Մկրտութիւնից յետոյ կատարվեց հոգեհանգիստ բոլոր հանգուցեալ հայ դերասան-դերասանուհիների յիշատակին։ Նորածինը, որ ստացաւ Աստղիկ անունը, որդեգրվեց հայ բեմին։

◆ Կիրակի, նոյեմբ. 15-ին, Խոջիվանքի գերեզմանատանը տեղի ունեցաւ հոգեհանգիստ Ս. Զաւարեանի, Նիկոլ-Դումանի և Սաթենիկ Օհանջանեանի յիշատակին։ Օրվայ պատշաճ խօսք ասեց հանդիսադիր Զաւէն վարդապետը։

◆ Հաւլաբարի Հայուհեաց Բարեգործ. Ընկ. ճաշարանը քաղ. վարչութեան հաշւով ամեն օր հաց է մատակարարում 400 պահեստիների ընտանիքների, իսկ ամիսը մի անգամ բաժանում է թէյ և շաքար։

◆ № 40 հիւանդանոցում այժմ մնում են խոլերայով հիւանդ ընդամենը 10 հոգի։

◆ «Б. В.»-ն յայտնում է, որ Պիտիրիմ արքեպիսկոպոս այլ ևս չէ վերադառնալու Թիֆլիս էկզարխի պաշտօնով։

◆ Վրաստանի էկզարխի պաշտօնի թեկնածուների թւում տրվում է և ֆինլանդական արքեպիսկոպոս Սերգիի անունը։

◆ Կովկասեան Բժշկական Ընկ. շէնքում բացվեցին «էսպերանտօ» լեզուի դասընթացքներ։ Ուսման վարձը 1 ռուբլի է։ Դասընթացքները ղեկավարում է դ-ր Ֆիշէր։

◆ Պետրօգրադից վերադարձան Պետական Խորհրդի անդամ ընտրողներ իշխ. Դ. Ե. Ջաւօկայեվ և Մ. Վ. Մաչաբելի։

◆ Բոյչևսկայա փողոցի վրա ապրող ազնուական Շամիր-խան Մելիք-Բէգլարեան յայտնեց խուզարկու բաժանմունքի պետին, որ նոյեմբերի 1-ին, իր նախկին սպասաւորը իր տնից գողացել է 4645 ռ. ոսկէ և անդամանդէ իրեր և թաքնվել։ Ոստիկանութիւնը ձերբակալեց յանցաւորին և բանտարկեց։ Գողացված իրերը վերադարձվեցին ըստ պատկանելոյն։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Գանձակից գրում են մեզ հոկտեմբ. 21-ին. «Այստեղ բացվեց վաճառականական բանկի բաժանմունք. բակի բացմանը հրաւիրված էին տեղական բոլոր ազգութիւններից ներկայացուցիչներ. օրհնութեան արարողութիւնը կատարեց ռուս, հայ և թուրք հոգևորականութիւնը։ Հանդիսից յետոյ հրաւիրվածները հիւրասիրվեցին քաղցրաւենիքով և նախաճաշով։»

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—о—

ԱՆՎԱՃԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

«Դիւան հայոց Պատմութեան» գիրք ԺԴ. Հարստահարութիւնները Թիւրքահայաստանում (վաւերագրեր 1801—1888), հրատարակեց Գիւտ ա.-քահ. Աղանեան, Թիֆլիս, 1915 թ.։

III

1872 թ. յետոյ թիւրքահայն ունեցաւ Սան-Ստեֆանօյի և Բեռլինի խօստումները։ Կոմս Ն. Պ. Իգնատիևի լեզւով խօսելով՝ «Հայաստանի անունը առաջին անգամ արտասանվեց մի միջազգային պայմանագրի մէջ», սակայն Հայաստանում կատարվող սխրագործութիւնները վերջինը չը դառան, այլ բորբոքվեցին նոր սաստկութեամբ։ Ինչ որ առաջ կատարվում էր առանց սիստեմի, այժմ դէն ձգեց իր անկերպարան բնաւորութիւնը և դարձաւ կազմակերպված հայաջինջ քաղաքականութիւն։ Այժմ հարկաւոր էր գործադրել քաղաքական բարձր իմաստութիւն, որ կարելի լինէր ապահովել հայերի ֆիզիքական գոյութիւնը և առաջնորդել նրանց դէպի բարւոք վիճակ, սակայն քաղաքական իմաստութեան տեղ հրապարակ նետվեց շռնդալից արկածախնդրութիւնը, որը չը նայած բարձր անձնազոհութեան, չը նայած գործողների դիւցազնական ճիգերին՝ այնու ամենայնիւ մնաց արկածախնդրութիւն և մխիթարութիւն չը պարգևեց ոչ ժողովրդին և ոչ նրա անունով խօսող բարձրագոչներին։

Որ Սան Ստեֆանոյի և Բեռլինի խոստումները արհաւիրքի դուռն են բացել հայերի համար, այդ պարզվում է մի քանի վկայութիւններից, որ մենք գտնում ենք «Դիւանի» այս հատորի մէջ։ 1880 թ. Գ. Նորատունկեանը (հաւանօրէն յետագայում յայտնի Գաբրիէլ էֆէնդին) գրում է Գ. վ. Սրուանձտեանին հետևեալը. «Ինչ որ ալ լինի, այն համոզումը ունիմ, որ լաւ քաղաքականութիւն չեմք ըլլար անդադար քրդաց դէմ գանգատելով ու զմեզ շարունակ անոնց յարաբերութենէն հեռու պահելով։ Քրդերը մարմին մը կը կազմեն ցեղով և զէնքով, հայքս ալ ազգաւ և լոյսով. պէտք է որ իրարու բաղխելէ առաջ իմաստասիրեմք այն օգուտները, որ կարելի է քաղել նոցա հաղորդակցութենէն ու միաբանութենէ, եւրոպական իրաւագիտութիւնը կը պատուէ նախ զէնք ի ձեռին ունեցողը, ապա լուսաւորեալը» (էջ 346)։

Գ. Նորատունկեանը գրել է իր նամակը Բասէնի Ծօրասան գիւղից և իբրև ականատես՝ նրա մէջ վկայում է, թէ՝ «թուի ինձ թէ սոքա (այսինքն քիւրդերը Դ. Ա.) աւելի տաճկաց կը մօտեն քան թէ հայոց»։ Ցամենայն դէպս Գ. Նորատունկեանը շեշտում էր մի գործելակերպի վրա, առանց որի հայերի ճիգերը՝ կարգ ու կանոն հաստատել Հայաստանում՝ պիտի ապարդիւն անցնէին։ Նա հրապարակ էր նետում հայ-քիւրդական համերաշխութեան և զինակցութեան անհրաժեշտութիւնը։ Ով իր կողմն ունենար քիւրդերին, նա և կացութեան տէրը պիտի լինէր։ Ուրեմն հայերի և թիւրք կառավարութեան միջև քիւրդերը պիտի դառնային մրցութեան առարկայ։ Ցայտնի է, որ Աբդուլ-Համիդը աւելի քաղաքագէտ գտնվեց, քան թէ հայերը։ Նա սիրաշահեց քիւրդերին, զինեց նրանց և նրանց զօրութեամբ վիժել տուեց հայերի ծրագիրները։ Եւ այժմ մեզ մնում է կրկնել՝ Было, да уплыло! Այո, եղել է, բայց չուել է…

Զրախեղդ լինողը ձեռքը պարզում է ծղօտին։ Այս տպաւորութիւնն է թողնում այն առաջարկը, որ Օդեսայից 1887 թ. անում է Գ. վ. Սրուանձտեանին Ռուբէն Հասան-Ջալալեանը։ (Սա պէտք է լինի Երևանի այն մտաւորականներից մէկը, որոնք 1883 թ. մեղադրվում էին իբրև հայ շարժման մասնակցողներ և աքսորվեցին Ռուսաստան)։ Նա թերթերում կարդացել է, «որ Կ. Պոլսի հայոց եկեղեցիներում կան մի քանի ֆիրմաններ, որոնք առանձնաշնորհված են հայերին Մահմէդից և մի քանի խալիֆներից ու սուլթաններից և որոնց պարունակութիւնն է «մեծ մարգարէի խալիֆների» ու սուլթանների բարձր հրամանը մահմեդականներին՝ պահպանել բարեկամական յարաբերութիւններ հայերի հետ և հալածանքի չենթարկել նրանց», ուստի և առաջարկում է, որ Սրուանձտեանը իր վրա վերցնի թարգմանել այդ հրովարտակները հայերէնի, օսմաներէնի, պարսկերէնի և քիւրդերէնի, ապա տպագրել տայ և տարածի այդ ժողովուրդների մէջ։ «Այդպիսի մի գործ, ոչ ծանր ինքն ըստ ինքեան,—աւելացնում է Հասան-Ջալալեանը,—աւելի ազդեցութիւն և բարի հետևանք կունենայ, քան թէ Բեռլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածի մեռեալ տառերը» (էջ 385)։

Զարմանալին նա է, որ այս առաջարկն էլ նորութիւն չի պարունակում իր մէջ։ Այս եղանակով դեռ ևս նախորդ դարի 60-ական թուականներին Պարսկաստանի մոլեռանդ մահմեդականներին կամենում էր զինաթափ անել Մատթէոս կաթողիկոսը։ Նա խօսում էր մի ֆերմանի անունից, որը տրված է հէնց իսլամի հիմնադրից և պահվում է Էջմիածնում։ Անճարը կերել է բանջարը. էլ ինչ կարելի է անել։

«Դիւանի» մի հետաքրքրական վաւերագիր (Մարկոս Նաթանեանի նամակը Գ. եպ. Սրուանձտեանին, էջ 385—392) ցոյց է տալիս, որ 1887 թ. հայ գաւառներում սկսվել է գործիչների ձերբակալութիւն, որ արտասահմանում լոյս են տեսնում «Արմէնիա» և «Իրաւունք» պարբերականները, որոնք՝ առանց երկրում ազդողների հաճութիւնը ստանալու՝ ուղարկվում են նրանց և պատահածներին դուռ բանում։ Ձերբակալվածների մէջ է ինքը՝ նամակի հեղինակը, որ Միացեալ Ընկերութեան տեսչի օգնականն է։ Ձերբակալված է և Միացեալի տեսուչը, և Մ. Նաթանեանը իր ու իր գլխաւորի քաղաքական դաւանանքի մասին հետևեալն է գրում. «Թերևս ոչ ումեք աւելի քան թէ ձեր սրբազնութեան ծանօթ է մեր երկուցուն քաղաքական սկզբունքներն ու դաւանութիւններն որովք մեր ազգի գոյութիւնը մեր օսմ. պետութեան գոյութեան հետ կցեալ և անշատելի կը ճանչնամք. և մեր ընթացքն ու վարմունքը՝ որք միշտ համապատասխան մեր գաղափարաց՝ հակառակ եղած են բաղդախնդիր, խաբեբայ, կեղծ ազգասէր, շահամոլ-խռովիչ և սոցա նման տարրոց, որոց մեծկակ մի խումբ թշնամի է մեզ այս և միայն այս պատճառաւ զի դատապարտած եմք և կը դատապարտենք այնպիսեաց յիմարութիւններն և բախտախնդիր ձեռնարկներն» (էջ 388)։ Մենք չենք կասկածում Մ. Նաթանեանի անկեղծութեան վրա, որովհետև գիտենք, որ մտածող հայերից շատ-շատերը հայութեան ազգային ապագան աւելի շատ կապել են օսմանեան պետութեան հետ։ Նաթանեանի նամակը մի աւելորդ փաստ է, որ այդ գաղափարը մօտ անցեալում ջերմ դաւանողներ ունէր. Բայց այդ գաղափարի կողքին ունենում էր մի ուրիշ գաղափար, և հաշտութեան կամուրջ չէր նկատվում նրանց մէջ։

Ինքը Գ. վ. Սրուանձտեան, որը «Դիւանի» այս հատորի ամենից շատ յիշված անձն է, 1883 թ. գրում է Մ. Մամուրեանին. «Նիւթէ ինկած, հոգին հատած, այսպէս ժամանակ չկարծեմ թէ ունեցեր է հայն։ 61-ի անիւն դեռ կը թաւալի ուրեք ուրեք, և կարգ մը մանուկները կը վազեն անոր ետևէն փոսէ փոս ինկալով ելլելով։ Անիւն՝ ի հիւսիս կը դառնայ» (էջ 453)։

«Անիւն՝ ի հիւսիս կը դառնայ»։ Սա նշանակում է, թէ թիւրքահայ դատի վարումը անցնում է ռուսահայերի ձեռքը։ Մենք այդպէս ենք ըմբռնում Սրուանձտեանի խորհրդաւոր ոճը։ Եւ երբ թիւրքահայերի դատը սկսում է անցնել ռուսահայերի ձեռքը, հընարաւոր պիտի լինի ասել, թէ՝ «ազգի գոյութիւնը մեր օսմանեան պետութեան գոյութեան հետ կցեալ և անշատելի կը ճանչնամք»։ Հարկաւ, սա չի կարելի ասել, ասողին էլ հաւատացող չի լինի։ Գիտենք արդէն, որ 61-ի անիւը «ի հիւսիս» դարձաւ և աւելի շատ հիւսիսում պտտեց։ Եւ այսօր էլ ականատես ենք նրա վազքին։ Ո՞ր կէտում կը գտնէ նրա վազքը իր վախճանը՝ չը գիտենք։ Միայն պիտի ասենք, որ կեռակրի համը չառած՝ արդէն կուրացանք ծխից։

—

Կը կամենայինք, որ «Դիւանի» ընթերցողը մեզ չը կշտամբէ, որ մենք ուշադրութիւն չենք դարձրել այն կարևոր վաւերագրերի վրա, որոնք պարզում են, թէ ինչ ընթացք բռնեցին Ղրիմի պատերազմի ժամանակ հայերը և նրանց հարևանները։ Այդ վաւերագրերը իրօք պերճախօս և նշանակալից վկայութիւններ են, սակայն կան պատճառներ, որոնք այժմ անհնարին են դարձնում նրանց ինտերպրետացիան։

Դ. Անանուն

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովարանի բեմի վրա Հայ. Դրամատիկ Ընկերութեան դերասանական ընկերակցութեան հերթական ներկայացումն էր նոյեմ. 14-ին «Աշտանակ» մէկ գործողութեամբ դրաման, որի մէջ Էմիլի դերը տ. Սիրանոյշի արմատական դերերից մէկն է նկատված։

Թէ Սիրանոյշի և թէ նրա գլխաւոր խաղընկեր Սեւումեանի շնորհիւ դրաման գործեց իր տպաւորութիւնը ներկայ ձգող հասարակութեան վրա։

Այնուհետև ներկայացվեց «Թակարդի մէջ» 3 արարուածով ֆարսը, որի թարգմանութիւնը և հայ բեմի վրա խաղալը առնուազն թիւրիմացութիւն ենք համարում, որով և կանգ չենք առնում նրա միամիտ, թէև շատ ծիծաղաշարժ ու զուտ ֆարսական տեսիլներով հարուստ բովանդակութեան վրա։

Խաղն անցաւ առհասարակ, ըստ որում աչքի ընկան պ.պ. Աբէլեան՝ Պեստր Հաւայի, Ագեանը՝ Նիկոլկա սպասաւորի, Ժամէնը՝ շանսոնէտ Միմի և տ. Զաբէլ՝ Միրաքլորա Գալոմեյայի դերերում։ Ռեցէնզենտ

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐ.

ՀԱՇԻՒ

Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Վերին Ագուլիսի Վարչութիւնը, յօգուտ Հին-Նախիջևանում խնամվող հայ փախստական որբուկների, օր. օր. Սառա ու Քրիստինէ Տէրեանների և օր. Աշխէն Մելիք-Մուսեանի եռանդուն ջանքերով հանգանակել է հետևեալ նուէրները.

Տիկին Կատարինէ Տէրեան	5 ռուբլի
տ. Սօֆիա Մարգարեան	» »
տ. Մարիամ Ասլանեան	» »
պ. Քրիստափոր Յակոբեան	» »
տ. Սօֆիա Արեան	3 ռուբլի
տ. Անուշկա Ներսիսեան	» ›
տ. Կատարինէ Գէորգեան	» »
տ. Ոսկի Աւետիսեան	› ›
պ. Յովհաննէս Ներսիսեան	» »
պ. Ալէք.	» »
Տիրուհի Իսկուհի Թումանեան	2 ռուբլի
տ. Հեղինէ Դուլգարեան	» »
տ. Գայիանէ Տէր-Յովհաննիսեան	» »
տ. Ջավահիր Ներսիսեան	» »
տ. Հայկանոյշ Համբարձումեան	» »
տ. Հեղինէ Մանուէլեան	› »
տ. Ոմն.	» ›
տ. Անուշկա Նուսնուսեան	» »
տ. Իսկուհի Բէգլարեան	» »
օր. Անիկօ Զաղեան	» »
տ. Վարօ Փանեան	» »
տ. Շուշանիկ Շիրազեան	» »
տ. Վարսենիկ Եարվելեան	» »
տ. Աննա Խօջամիրեան	› »
տ. Եղիսաբէթ Մարգարեան	» »
պ. Յարութիւն Բարխուդարեան	» »
պ. Կարապետ Եսայեան	» »
պ. Ստեփան Պետրոսեան	» »
տ. Բրաբիոն Աթաբեգեան	1 ր. 50 կ.
տ. Աննման Մարգարեան	1 »
տ. Շուշանիկ Բարխուդարեան	› »
տ. Կատարինէ Տէր-Միքայէլեան	» »
տ. Մարիամ Արեան	» »
տ. Նազլու Հախնազարեան	» »
տ. Ոսկի Ազամիրզեան	› ›
տ. Սաթենիկ Ղարիբջանեան	» »
տ. Շուշանիկ Ղարիբջանեան	» »
տ. Սօֆիա Արսլանեան	» »
տ. Անիկօ Փանեան	» »
տ. Վարդուհի Փանեան	› »
տ. Մարիամ Բարխուդարեան	» »
տ. Նինօ Մելիք Մուսեան	» »
տ. Գենի Քալանթարեան	» »
տ. Սաթենիկ Տէր-Զաքարեան	» »
տ. Աշխէն Բէգլարբեգեան	» ›
տ. Անոյշ Մալեան	» »
տ. Սալբի Տէր-Միքայէլեան	» »
տ. Նունուկ Սարգսեան	» »
տ. Մանիա Տէր-Հայրապետեան	» »
տ. Նինօ Մկրտչեան	» »
տ. Շուշանիկ Հախնազարեան	» »
տ. Հայկանոյշ Փանեան	» »
տ. Գոհար Տապատեան	» »
տ. Անուշկա Ղուկասեան	» »
տ. Հռիփսիմէ Մուրադեան	» »
պ. Գէորգ Բաղդեան	» »
պ. Յովհաննէս Ջանեան	» »
պ. Գէորգ Թումեան	» »
պ. Գարեգին Էլչիբէգեան	» »
պ. Թովմաս Ղարիբջանեան	» »
պ. Բաղդասար Թումեան	» »
պ. Ստեփան Նարինեան	» »
պ. Սարգիս Անանեան	› »
պ. Մ. Ղարիբեան	» »
պ. Բագի Փանեան	» »
պ. Ստեփան Ասլանեան	» »
պ. Հայկ Սողոմոնեան	» »
Ուստա Թովմաս Դաւթեան	» »
տ. Հերիքնազ Պետրոսեան	50 կ.
տ. Սիրանոյշ Միքայէլեան	— »
օր. Մարիամ Կզարթմեան	— »
տ. Սաքինէ Մուխանեան	— »
տ. Մարիամ Կիրակոսեան	— »
տ. Մարգարիտ Գասպարեան	— »
տ. Համասփիւռ Սուլխանեան	— »
տ. Հայկանոյշ Վանեան	— »
տ. Դոմնիկէ Միքայէլեան	— »
տ. Վարդուհի Արեան	— »
տ. Եղիսաբէթ Շիրազեան	— »
տ. Մանի Միքայէլեան	— »
տ. Նունէ Զաքարեան	— »
տ. Աննա Մկրտչեան Մալեան	— »
օր. Անիկօ Մարգարեան	— ›
տ. Վարյա Մարգարեան	— »
տ. Սոնիա Թափչեան	— »
տ. Հռիփսիմէ Տէր-Հայրապետեան	— »
տ. Զմրուխտ Տէր-Խաչատրեան	— »
տ. Փառանձեմ Սրապիոնեան	— »
տ. Սանիա Սրապիոնեան	— »
պ. Յովհաննէս Դիլանազարեան	— »
պ. Սիմէօն Յովհաննիսեան	— »
պ. Կարապետ Մելիք-Մուրաթեան	— »
պ. Կարապետ Միքայէլեան	— »
պ. Մամիկոն Տէր-Խաչատրեան	— »
պ. Գէորգ Էլչիբէգեան	— »
տ. Հռիփսիմէ Ստեփանեան	40 կ.
պ. Ջանիբէգ Տէր-Խաչատրեան	— »
պ. Պ. Մարգարեան	— »
պ. Մուշ. Մանուկեան	— »
պ. Յակոբ Տէր-Ջանեան	35 »
պ. Յովհաննէս Տէր-Գէորգեան	30 »
պ. Շմաւոն Տէր Միքայէլեան	25 »
Ոմն	20 »
Մանուշակ Յարութիւնեան	»
Շախով	10
Ծխերի միջոցներից, վարչ. ից	100 ռուբլի

Գումարն է 231 ռուբլի

Շնորհակալութիւն բոլոր արգոյ նուիրատուներին և հանգանակող օրիորդներին։

Վարչութիւնս, իր հանգուցեալ փոխ-նախագահ Պօղոս Յովհաննիսեան Ազամիրզեանի յիշատակին, դագաղի վրա դրվելիք պսակի փոխարէն, խորին շնորհակալութեամբ ստացել է նաև՝ տ. Նազլու Յովհ. և պ. Յարութիւն Զաք. Հախնազարեան ամուսիններից 10 ռ.

Տիկին Աննման Նազ. Մարգարեանից 5 ռ.

Տիկին Լ. Յ. Մ.-ից 5 ռ.

Գումարը 20 ռ.

Ընդամենը 251 ռ.

Նախագահ վարչութեան՝ Ալ. Տէրեան

Անդամ-գանձապահ՝ Գր. Ղ. Ղազարեան

818. 1—1

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝
№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝
№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ՆԵՎՐԱՍՏԷՆԻԱՆ

եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, նէվրալգիան, ողնաշարի հիւանդ., կաթուածները, սրտի հիւանդութ., զառամեալ դրութիւնը, հիւծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպերմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է, այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան վրա և չը գնել կեղծուածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մակլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։

Профессоръ Д-ръ П Е Л Ь и С-вья, Петроградъ
Մատակարար Նորին Կայսերական Մեծ. Դրան.

№ 3. 0—9

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծննդկանաց.
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկուշ., հինգշ. և շաբ. երեխայոց ներքին և հիւ. և ծննդկանաց.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—199

ԲԺԻՇԿ
Ի. ԵԱ. ԳՕԿԻԷԼՕՎ
(Նախկին օրդինատոր Կալինկինեան հիւանդ. Պետրոգրադում)
Ընդունում է հիւանդներին վեներական, սիֆիլիս, կաշւի եւ ջղային հիւանդութիւններից։
Ամեն օր՝ առ. ժամը 9½—12.
եր. » 5—7½.
Հասցէն՝ Միխայլովսկի պր. № 113.
(ա. մ.) 801. 12—6

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРОЙ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО,
ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М·ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ
И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ
ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М·ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.
ВЕРХНІЙ ЭТАЖЪ
762. 50—8 (Ե. Ա.)

ՄԱՐԴ!
Դու փառք չես որոնում, բայց չես հասնում նրան.

Մեկը՝ առանց կոչէկի մեծ գործ է սկսում և առաջ գնում. միւսը նախանձում է նրան, իր ծնողներն օրն ու ժամը անիծում, ճակատագրից գանգատվում։ Այն ինչ՝ բաղդը, ճակատագիրը դեր չունեն այդտեղ։

Ձատերը կան, որ դեռ չեն ըմբռնում իրանց անաջողութիւնների իսկական պատճառները, չը գիտեն, որ դրանք թաքնված են քայքայված օրգանիզմի և ջղային հիւանդութիւնների մէջ։ Ջղային հիւանդութիւնը գլխաւորապէս առաջ է գալիս գլխի ուղեղի և ողնաշարի անկանոնութիւնից և հիւթի ու ֆօսֆորի շատ կորցնելուց։

Ջղային հիւանդութիւնները զանազան տեսակի են. օր. գլխացաւ, ցնցումներ, մէջքի, ողնաշարի, երիկի, կոկորդի, սրտի, ձեռքի ոսկորների ցաւ, անքնութիւն, ծանր երազներ, երեխի աչքերի խաւարում, դող, անհանգստութիւն, օրգանական թուլութիւն, մտացրւութիւն, վախ, արբեցողութիւն, բարկացկոտութիւն, նիհարութիւն և այլն։

Դրանց բուժելու երկու ճանապարհ կայ. 1) Անդադար հանգստութիւն, մտաւոր և ֆիզիքական աշխատանքներից առ ժամանակ խուսափել,—մի բան, որ դժուար է ներկայ ջղային դարում, երբ ամեն վայրկեան ցնցող դէպքերն են յաջորդում միմեանց։

Մնում է երկրորդ միջոցը՝ սննդարար հիւթեր ընդունելը։ Իսկ այժմ ամենալաւ հիւթը ՖՕՍՖՕՐՆ է։

Պարիզի յայտնի բժիշկ Գիլէզին երկար աշխատանքից և փորձերից յետոյ աջողվել է պատրաստել միակ դեղը, որը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ ֆօսֆոր. այդ դեղը կոչվում է Ստիմուլոլ, որը վերականգնում է կորցրած նիւթասարքութիւնը, առողջութիւնը և ընդհանուր ջղայնութիւնը և թուլութիւնը. արտասահմանի և Ռուսաստանի յայտնի պրոֆեսօրները, բժիշկները և հիւանդները ուսեալ են իրանց գովասանքը և շնորհակալութիւնը և այժմ զանազան սանատորիաներում և հիւանդանոցներում բժշկում են հիւանդներին Պարիզի յայտնի բժիշկ Գիլէզի հանճարեղ դեղով՝ Ստիմուլոլով… Ահա ինչ են գրում Ստիմուլոլի բժշկութեան մասին բժիշկները.

Յարգելի բժիշկ! Ուրախութեամբ յայտնում եմ, որ Ստիմուլոլ պրեպարատը տալիս է զարմանալի արդիւնք։ Ստիմուլոլ պրեպարատը հանճարեղ գիւտ է, նա ընդունելու համար շատ դիւրին կերպով բաժանված է։ ամբողջ սրտով աջողութիւն եմ ցանկանում նրան։

Իմ հիւանդների սեռական ջղայնութեան ամենածանր դէպքերը ես բժշկում եմ ստիմուլոլով։ Հիւանդութեան թեթև դէպքերում ստիմուլոլի ազդեցութիւնը նկատվում է 2—3 շաբաթից յետոյ, իսկ ջղային հիւանդութիւնների դժուար դէպքերում՝ 3—4 շաբաթից յետոյ։

Աչքի առաջ ունենալով պրեպարատի կատարելագործութիւնը մի քանի դէպքերում, ես այն յանձնարարում եմ հիւանդին նոյնիսկ ոչ նրա ներկայութեամբ, ցոյց տալով նրան գեղատոմսից օգտվելու հեշտ ձևը։

Սեռական անկարողութեամբ բռնված հիւանդները Ստիմուլոլով աջողութեամբ կարող են օգտվել առանց բժշկի գեղատոմսի, որ առանձնապէս ձեռնտու է, աչքի առաջ ունենալով այն կեղծ ամօթխածութիւնը, որ զգում են հիւանդները։

Սեղմում եմ Ձեր ձեռքը՝ Պրոֆ. Մ. Լեգալար։

Իսկական Ստիմուլոլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի արկղը ունի գործարանի դրոշմը՝ Institut „D-r Calvet Paris". Մի տուփը բաւական է, որ դուք զգաք նրա հրաշալի գործողութիւնը և դուք կը ստանաք ձեր ուզած եռանդը և առողջութիւնը. Գրքերն ուղարկվում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրոֆեսօրների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները։

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Тифлисское отдѣленіе Института доктора Кальве, Тифлисъ, Эриванск. площ., Пушкинская 3, верхній этажъ, отд. 11. (Խնդրեմ հասցէն գրել լրիւ, ինչպէս որ սա ներքեւ գրված է)։ Մէկ տուփը արժէ 7 ռուբ., ճանապարհածախսով և վերադիր վճարով 50 կոպ. աւելի արժէ։ Ով ուղարկի 7 ռ. փողը առաջուց լրիվն, ճանապարհածախս չի վճարում։

Վերադիր վճարով ուղարկվում է միայն 2 ռ. 50 կ. կանխավճար ստանալուց յետոյ։

Գլխաւոր պահեստ ամբողջ Անդրկովկասի համար—Интернаціональное медико-фармацевтическое депо, Тифлисъ, Эриванск. пл., № 3.

(Ե.) 609. 10—10

НОВОЕ ИЗОБРѢТЕНІЕ ВЪ АМЕРИКѢ.

Въ столицѣ новаго міра Нью-Іоркѣ М. Деламуремъ изобрѣтено самое радикальное средство „Рапидъ" для полнаго излеченія остраго и хроническаго Триппера (Гонорреи).

Въ настоящее время въ лучшихъ клиникахъ и санаторіяхъ цивилизованныхъ странъ Америки и Европы для излеченія Триппера (Гонорреи) какъ остраго такъ и самаго застарелаго хроническаго, извѣстные врачи, профессора и спеціалисты примѣняютъ составъ „Рапидъ" изобрѣтенный М. Деламуремъ. „Рапидъ"-разрѣшенъ Россійскимъ Главнымъ Медицинскимъ Управленіемъ за № 1295.

Курсъ леченія при самыхъ застарелыхъ случаяхъ три недѣли, два двойныхъ флакона и коробка пилюль, прилагается способъ употребленія на всѣхъ мѣстныхъ языкахъ. Каждый больной можетъ у себя дома лечиться безъ посторонней помощи, въ тайнѣ. Цѣна за одинъ флаконъ 5 руб. полный курсъ леченія 2 двойныхъ флакона и коробка пилюль 9 руб. въ провинцію меньше двухъ флаконовъ не высылается. Налож. плат. высылается только по полученіи задатка 3 руб.

Избѣгайте недоброкачественныхъ и вредныхъ для здоровья поддѣлокъ и подражаній.

Исключительный складъ для всего Кавказа, въ Кавказскомъ отдѣленіи Московской Лабораторіи М. Деламуре, Тифлисъ, Эриванская площадь Пушкинская 3. д. Кредитнаго О-ва верхній этажъ.

Всѣмъ лазаретамъ, госпиталямъ аптекамъ и аптекарскимъ складамъ отпускается со скидкой, не менѣе 5 коробокъ.

(Ե.) 50—10

Ս. Կարապետ (Հալաբար) եկեղեցու համար հարկաւոր են ձայնաւոր, տարիներ ծառայած, հմուտ միայն ԵՐԿՈՒ ՏԻՐԱՑՈՒ. Պայմանների մասին խնդրվում է դիմել երեցփոխ պ. Ալեքսիս Մանուէլեանին։
(Ե.) 835. 2—1

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ
ցանկանում է պաշտօն ունենալ հայ ընտանիքներում որպէս տնտեսուհի կամ երեխաների վերակացուհի։
Հասցէն՝ Арартская ул. № 2.
771. 3—1

„ՄԵՂՈՒ" ԱՇԽԱՏԱՆՔԻ — ՏՈՒՆ —
վարչութիւնը սրանով յայտնում է, որ տրվում են կանանց մեծ քանակութեամբ վերմակներ և ճերմակեղէններ կարելու։ Ցանկացողները թող դիմեն Հալաբար Лазарьевская ул. № 1, «ՄԵՂՈՒ» Աշխատանքի Տուն։ Հեռախոս 17—30։
830. 3—3

Կաֆէ „ՑԵՆՏՐԱԼԻ"
(Երևանեան հրապարակ)
համար հարկաւոր է խմորեղէն պատրաստող ՄԻ ՎԱՐՊԵՏ։ Ցանկալի է տաճկահայ։ Պայմանների մասին դիմել երեկոները ժամը 6—9-ը։
(Ե.) 820. 2—1

Ծախվում է ԵՐԵՒԱՆՈՒՄ
ՏՊԱՐԱՆ
7 բէալ մօտ 60 կասսաներով և լի զանազան, աւելի քան 160 տեսակ տառերով և բազմազան պարագաներով։ Կայ մի փոքրիկ արագատիպ լաւ պահված, կարտոն և թուղթ կտրող մեքենայ, ինչպէս և զանազան կազմարարական գործիքներ։ Գինն է 6000 ռուբլի։
Դիմել՝ Эривань, Эмину Теръ-Григорянцу. (Ե.) 772. 4—4

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.